Ապառաժ

Հիմնադրված է 1991 թվականին: 8 (529) մայիս 1-17, 2023թ.

ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀՅ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Ազգային ժողովը քաղաքական հայացքների բյուրեղացման հարթակ

Արցախի հիմնախնդրի շուրջ բանակցությունների արհեստական արագացումը լուրջ մտահոգությունների տեղիք է տալիս հայկական աշխարհի բոլոր հատվածներում: Քաղաքական շրջանակները բոլոր բեմահարթակներում փորձում են վերծանել, վերլուծել եւ մեկնաբանել Ալիեւին, Փաշինյանին, Շառլ Միշելին, Պեսկովին, Լավրովին, Բլինքենին եւ Մակրոնին...

Այս համայնապատկերում, բուն Արցախում այդ բոլոր ենթադրություններն ու մեկնաբանություններն ուղեկցվում է հումանիտար աղետի խորացման եւ ներքաղաքական իրավիճակը միտումնավոր սրելու ակնհայտ փորձերով:

Մի քանի օր առաջ Բրյուսելում կայացած հերթական հանդիպման ընթացքում Հայաստանի եւ Ադրբեջանի փաստացի ղեկավարները Եվրոպայի խորհրդի նախագահի միջնորդությամբ շարունակել են Արցախի ճակատագրին վերաբերող հարցերի քննարկումը՝ անտեսելով նույն եվրոպական արժեքները՝ ազատության, ինքնորոշման իրավունքի եւ մարդու հիմնարար իրավունքների համատեքստում:

Անկախ Արցախի Հանրապետությունը, որպես հայկական երկրորդ պետություն, կայացած իրողություն է: Արցախի Հանրապետության ճակատագրի հարցով որեւէ մեկը լիազորված չէ բանակցելու: Հայկական երկրորդ անկախ հանրապետությունը անթերի իրավական հիմքով կազմավորվել է՝ առաջնորդվելով 1991թ. դեկտեմբերի 10-ի անկախության մասին հանրաքվեով, որի միջոցով Արցախի ժողովուրդն իր կամքն է արտահայտել ազատ ու անկախ երկրում ապրելու համար:

Տարածաշրջանային մարտահրավերների պայմաններում հույժ կարեւոր է Արցախի Հանրապետության պետականության դիմադրողականությունը, որն այս պահին լուրջ ճնշումների է ենթարկվում արտաքին եւ ներքին ճակատներում: Մեզ փորձում են համոզել, որ նախորդ 30 տարիների մեր հավաքական անձնուրաց ջանքերն ու թանկ զոհողություններն անիմաստ են եղել եւ փորձում են մեզ պարտադրել ենթարկվել քարտեզի վրա Արցախի տեղը չիմացող միջազգային կառույցների շահադիտական որոշումներին:

Արցախի իշխանություններն ու քաղաքական ուժերը մի քանի անգամ ստիպված են եղել Հայաստանի գործող ԶՊ-ական իշխանություններին, հանձին Նիկոլ Փաշինյանի, հիշեցնել իրենց իսկ պարտավորությունը ԼՂՀ-ն Ադրբեջանի կազմում որեւէ կերպ նշված փաստաթղթի անընդունելիության մասին, սակայն Հայաստանը ներկայացնող անձինք շարունակում են անօրինական քայլերով վնասել Արցախի փխրուն անվտանգային միջավայրը:

Անընդունելի է, «պղտոր ջրում ձուկ որսալու» գործելաոճով, ի խնդիր պաշտոնի ու հատվածական շահերի, իրականում օտարի շահերը սպասարկող պատեհապաշտ գործիչների նկրտումները: Այդ գործելակերպը խաթարում է պետականության հիմքերը:

Արցախի պետականությունը մեր բոլորի ձեռքբերումն է, որի համար հազարավոր հայորդիների արյուն ու քրտինք է թափվել: Ուստի, օրվա իշխանությունները պարտավոր են պահպանել պետական ինստիտուտների լիարժեք գործունեությունը, բացառելով արկածախնդրությունն ու պատեհապաշտությունը: Քաղաքական դաշտի առկա հայացքների բյուրեղացման հարթակը պետական համակարգում երկրի խորհրդարանն է. առ այդ՝ բոլոր քաղաքական խորհրդակցություններն ու քննարկումները պետք է տեղափոխվեն ժողովրդի անունից որոշումներ կայացնելու սահմանադրական մանդատ ունեցող՝ Արցախի Ազգային ժողով:

Համոզված ենք, որ բոլոր տարակարծությունները կարելի է քննարկման նյութ դարձնել երկրի խորհրդարանում՝ բազմակարծության հաշվառմամբ:

Հանուն Արցախի, ընդդեմ Ադրբեջանի. Կոռնիձորում հանրահավաք կկազմակերպվի

Հայաստանին պարտադրվող զիջումներին եւ սահմաններին ոչ ասելու, Արցախին եւ Հայաստանին տեր լինելու մեր որոշումը վերահաստատելու, ապրելու եւ պայքարելու մեր կամքը ցույց տալու համար «Կամավորական շարժում» ՀԿ-ն մայիսի 20-ին, ժամը 12:00-ին հրավիրում է «Հանուն Արցախի, ընդդեմ Ադրբեջանի» հանրահավաք Կոռնիձորում:

Մայիսի 9-ին «Երկրի հյուրասրահ»-ի տաղավարում էր ՀՅԴ Բյուրոյի երկարամյա ներկայացուցիչ, «Կամավորական շարժում» ՀԿ նախագահ Հրանտ Մարգարյանը, ով անդրադարձել է Կոռնիձորում կայանալիք ակցիային՝ նշելով, որ կամավորական շարժման եւ ժողովրդի լայն մասնակցությունն այդ խաղաղ ակցիային արդեն իսկ կվկայի, որ մենք, անկախ ամեն ինչից, պատրաստ ենք պաշտպանելու մեր հայրենիքը:

«Մեզ պարտադրված սահմանի մոտ՝ Կոռնիձորում, ժողովրդային խաղաղ ցույց կանենք: Չենք չենք տանելու մեզ հետ, մենք խաղաղ ցույցի նպատակ ունենք, որտեղ մեր ժողովուրդը պետք է ասի, որ ինքը տերն է Արցախի եւ չի ընդունելու այն, ինչ փորձում են պարտադրել:

Ով ուզում է համաձայնի, ով ուզում է խոսք տա, բայց մենք չենք համակերպվելու, մենք շարունակելու ենք պայքարը, որ տիրանանք մեր իրավունքներին: Մենք սա ենք ուզում ասել ադրբեջանցուն, սա ենք ուզում ասել արցախցուն, սա ենք ուզում ասել բոլոր-բոլորին: Ուզում ենք աշխարհին ասել՝ ով ինչ ուզում է՝ թող անի, ինչ առեւտուր ուզում է՝ թող անի, դա հայ ժողովրդի կողմից ընդունելի չէ: Մենք տեր կլինենք մեր իրավունքներին, մենք ոտքի կկանգնենք, մենք կպատրաստվենք այդ ամեն ինչը ձեռք բերելուն»,- հաղորդման ժամանակ ասել է Հրանտ Մարգարյանը:

Նրա խոսքով, տեղի ունենալիքը ակցիա է, սակայն այն միակը չէ, որովհետեւ, նրա կարծիքով, Նիկոլով թե առանց Նիկոլի՝ մեր վիճակը ծանր է, անելիք ունենք, եւ պետք է պատրաստվենք դժվար օրերի:

Հրանտ Մարգարյանն ընդգծել է, որ պետք է մտածել ամենակարեւոր հարցի մասին՝ համաժողովրդական բանակ ձեւավորելու մասին:

«Մենք կձեւավորենք այդ բանակը՝ առանց զենքի, կմարզվենք, կպատրաստվենք եւ կպահանջենք իշխանություններից, որ մեզ զենք տրամադրվի մեր հայրենիքը պաշտպանելու համար»:

«Կամավորական շարժում» ՀԿ նախագահ Հրանտ Մարգարյանը իր ասածները ուղերձ է համարում ներկա ու նախկին ազատամարտիկներին, որպեսզի ամեն մեկը ձեւավորի իր դասակը:

«Մենք կստեղծենք մի ցանց, որ բոլորին կապենք իրար: Հանուն այս հայրենիքի՝ մենք պետք է պատրաստվենք այս հայրենիքը պաշտպանելուն: Մենք պետք է ցույց տանք, որ հնարավոր է հայրենիքը պաշտպանել, մենք պետք է ցույց տանք, որ հնարավոր է տեր կանգնել կորցրած տարածքներին, մենք պետք է վերադարձնենք այդ կորցրածը, պետք է այդ ոգին ներշնչենք մեր ժողովրդին: Ես ուրիշ ձեւ չեմ տեսնում»:

Հրանտ Մարգարյանը, անդրադառնալով իշխանություն-ընդդիմություն հարաբերություններին, ընդգծել է, որ ընդդիմության այս պահի խեղճությունն իրականում հետեւանք է հայրենիքի ապագայի հանդեպ ունեցած պատասխանատվության: Հակառակ պարագայում, նշել է նա, ներքաղաքական իրավիճակն այնքան է լարված, այնպես են հատվել բոլոր գծերը, որ ընդդիմության անպատասխանատվության դեպքում Երեւանը մեկ օրում կվերածվի վերջին օրերի Փարիզին:

«Նիկոլ Փաշինյանը պետք է հասկանա, որ իր փրկությունը հայրենիքի փրկության մեջ է: Եթե նա ցանկանում է, որ սերունդները իրեն չհիշեն որպես դավաճանի, ամեն ինչ պետք է անի, որ համախմբում առաջանա: Ինքը պետք է մտածի՝ որպեսզի ինքը փրկվի, պետք է երկիրը փրկել: Իսկ դրա համար երկու բան է անհրաժեշտ՝ միասնական նպատակ եւ ազգային միասնականություն»,- նշել է Հրանտ Մարգարյանը:

«Կամավորական շարժում» ՀԿ նախագահը ներկայացրել է նաեւ հայրենիքի պաշտպանության հարցով կամավորական շարժման վերակազմակերպման եւ դրան համահայկականության բնույթ տալու գաղափարը: Որպես այդ նպատակին հասնելու առաջին քայլ՝ Հրանտ Մարգարյանը կարեւորել է դեռեւս Արցախյան ազատամարտի ժամանակ ձեւավորված կամավորական խմբերի ակտիվացումը եւ նրանց հայրենիքի պաշտպանության գործին ուղղորդելը:

«Այլապես, այն քաղաքականությունը, որ վարում են ՀՀ իշխանությունները, մեզ չի կարող խաղաղություն ու ապահովություն բերել: Թշնամին չի կարող առաջ գալ միայն այն դեպքում, երբ իմանա, որ կամ կջախջախվի, կամ մեծ գին կվճարի իր այդ քայլի համար: Այս իմաստով, մենք պետք է կարողանանք համախմբել մեր ուժերը եւ թշնամուն ցույց տալ, որ չենք պատրաստվում զիջել: Զիջման այս քաղաքականությունը մեզ տանում է ինքնասպանության»,- ասել է Հրանտ Մարգարյանը:

Ինքնորոշումն Արցախի ժողովրդի անքակտելի իրավունքն է, որը չունի այլընտրանք

ՀՅԴ Հայաստանի Գերագույն մարմինը մայիսի 15-ին հանդես է եկել հայտարարությամբ.

«Բրյուսելում տեղի ունեցած եռակողմ հանդիպումից հետո Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելը պաշտոնապես հայտարարել է, որ Հայաստանը ճանաչել է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը 1991 թ. Ալմա-Աթայի Հռչակագրի հիման վրա՝ 86.6 հազար քառ. կմ տարածքով:

Հայտարարությունը տեղի է ունեցել Ադրբեջանի կողմից Հայաստանի եւ Արցախի Հանրապետությունների նկատմամբ ուժի շարունակական կիրառման եւ ագրեսիայի, ինչպես նաեւ արցախահայության տեղահանության, էթնիկ զտման եւ ցեղասպանության ենթարկելու ահագնացող սպառնալիքների պայմաններում:

Այս հայտարարությունը կատարվել է՝ անտեսելով հետեւյալ հանգամանքները.

1. Հաշվի չեն առնվել եւ չեն հիշատակվում ԱՊՀ ստեղծման մասին Համաձայնագրի վավերացման ժամանակ Ալմա-Աթայի՝ ԱՊՀ ստեղծման մասին Համաձայնագրին կից արձանագրությամբ նախատեսված իրավասությամբ Հայաստանի Հանրապետության կողմից արված վերապահումները:

2. Ադրբեջանի Հանրապետության տարածքային ամբողջականությունը չի ներառում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը. վերջիններս ԽՍՀՄ-ից անկախացել են տվյալ պահին գործող օրենսդրական ընթացակարգերին համապատասխան: Ավելին, Ադրբեջանն իր անկախությունը հայտարարել է 1918-1920 թթ. Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության իրավահաջորդության հիման վրա, որի կազմում Լեռնային Ղարաբաղը չի եղել:

3. Արհամարհվել են Ղարաբաղյան հակամարտության կարգավորման վերաբերյալ միջազգայնորեն ճանաչված հիմնական ձեւաչափի՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահությամբ ամրագրված եւ բազմիցս հայտարարված սկզբունքները, ինչպես նաեւ Հայաստանի եւ ԵՄ-ի միջեւ կնքված «Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագիրը»:

4. Նիկոլ Փաշինյանը իրավասու չէ տալ համաձայնություն՝ առանց հայկական կողմի վերապահումներին հղում կատարելու, անտեսելով Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքը, խախտելով Հայաստանի Հանրապետության Անկախության հռչակագիրը, Սահմանադրությունը, ինչպես նաեւ Հայաստանի Գերագույն խորհրդի 1992 թ. հուլիսի 8-ի որոշմամբ ստանձնած հանձնառությունները, այդ թվում՝ այն, որ Հայաստանի Հանրապետության համար անընդունելի է միջազգային կամ ներպետական ցանկացած փաստաթուղթ, որտեղ ԼՂՀ-ն կնշվի Ադրբեջանի կազմում:

5. Հայաստանի ներպետական օրենսդրության նշված պահանջները ապօրինի շրջանցելով, առանց Արցախի համաձայնության, վերջինիս անունից եւ վերաբերյալ որեւէ համաձայնություն տալով՝ Նիկոլ Փաշինյանը վերազանցում է իր լիազորությունները, օժանդակում է Արցախի հայաթափման եւ արցախահայության հայրենազրկման ալիեւյան ռեժիմի քաղաքականությանը, առերեւույթ կատարում է առանձնապես ծանր հանցագործություններ: Բացի այդ, Նիկոլ Փաշինյանի կողմից՝ ի հակառակ իր, ինչպես նաեւ իր իսկ կողմից գլխավորած քաղաքական ուժի նախընտրական եւ ձեւավորած կառավարության ծրագրերի, որեւէ հայտարարություն կամ գործողություն լեգիտիմ չէ եւ անխուսափելիորեն առաջացնելու է քաղաքական, բարոյական եւ իրավական կոնկրետ հետեւանքներ:

Առ այդ, վերը նշված հանգամանքների ներքո տրված համաձայնությունները (նախատեսվող պայմանագրերը) միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի ուժով առոչինչ են:

Դիմելով միջազգային հանրությանը՝ կոչ ենք անում մասնակից չդառնալ եւ թույլ չտալ 21-րդ դարի մարդկության դեմ ուղղված հերթական միջազգային հանցագործությունների իրականացմանը:

Սիրելի՛ արցախցիներ, սիրելի հայրենակիցներ, չենք հաշտվում, չենք հանդուրժում: Ինքնորոշումն Արցախի ժողովրդի անքակտելի իրավունքն է, որը չունի այլընտրանք:

Միասնական պայքարով եւ ազգային համաձայնությամբ հաղթահարենք հայոց պետականությանն ուղղված գոյութենական սպառնալիքը»:

Առանձին անհատներ չեն կարող որոշել արցախցու ճակատագիրը

Կիրակի օրը Բրյուսելում տեղի ունեցած եռակողմ բանակցություններից հետո Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելը ոգեւորությամբ հայտարարեց, որ Փաշինյանն աներկբա ճանաչել է Արցախը Ադրբեջանի կազմում, իսկ Ադրբեջանը դրա դիմաց Արցախի վերաբերյալ որեւէ պարտավորություն չի ստանձնել:

Այսքանից հետո ինչպե՞ս են տեսնում Արցախի ապագան Արցախում՝ հարցի պատասխանը «Իրավունք»-ը փորձել է ստանալ ԱՀ նախագահի խորհրդական Արմեն Սարգսյանից, ով նախ փաստեց հետեւյալը.

«Արցախի ապագան ես տեսնում եմ երկու ձեւով. առաջինը՝ Արցախի ինքնորոշում եւ միջազգայնորեն ճանաչում, որն այս հանգրվանում շատ դժվար է իրականացնել, բայց որպես ռազմավարություն՝ միշտ մնալու է մեր օրակարգում: Երկրորդ, ստատուս-քվոյի պահպանում կամ մասնակի ճանաչում, որի իրականացումն ավելի հավանական եմ համարում: Պետք է հաշվի առնել, որ ամեն օր տեղի է ունենում աշխարհաքաղաքական լուրջ փոփոխություններ եւ ամեն պահի կարող է փոփոխվել իրավիճակը:



Գտնում եմ, որ ամենածանր պահերը արցախցիներն ապրում են հիմա, եւ պետք է միահամուռ ուժերով դիմագրավենք այդ դժվարություններին: Արցախի ապագան խարսխվում է Արցախ-Հայաստան-Սփյուռք եռամիասնության մեջ, չնայած այսօր տեսնում ենք, որ 120 000 արցախցիներ շրջապատված են ադրբեջանցիների կողմից, սակայն այս իրավիճակում ՀՀ ներկայիս իշխանությունները գտնվում են Խորհրդային Ադրբեջանի տերիտորյալ ամբողջականության ճանաչման եզրույթում, որի կազմի մեջ՝ Արցախի Հանրապետությունը: Արեւմուտքի հետ ընթացող բանակցություններում նույնիսկ չի շոշափվում Արցախի կարգավիճակի հարցը: Նկատենք, որ Արցախյան շարժման ցանկացած հանգրվանում կարելի էր ամեն ինչ պատկերացնել, բայց ոչ ՀՀ իշխանությունների վերոհիշյալ դիրքորոշումը:

Գտնում ենք, որ Ռուսաստան-Արեւմուտք հակադրությունները շատ հստակ գործում են նաեւ Հայաստանում եւ Արցախում: Արեւմուտքի նպատակը ռուսների դուրս մղումն է տարածաշրջանից, իսկ Ռուսաստանի նպատակը՝ տարածաշրջանում ամրապնդվելը եւ Արեւմուտքի՝ տարածաշրջան ներթափանցման կանխումն է:

Մենք պետք է մեր նպատակին հասնելու համար շատ ճկուն, բայց համարձակ քաղաքականություն վարենք՝ պարուրված ժողովրդի միասնականությամբ: Վստահ եմ, որ Արցախը չի լինելու Ադրբեջանի կազմում եւ որ մոտ ապագայում տարածաշրջանում լինելու են քաղաքական նոր դասավորումներ, որի սկիզբն «ազդարարելու» է մայիսի 28-ին՝ Հայաստանի Առաջին Հանրապետության անկախության օրը Թուրքիայում կայանալիք ընտրությունները: Առանձին անհատներ, անկախ նրանից, թե ինչ պաշտոն են զբաղեցնում, անկախ նրանից, թե նրանք Հայաստանում են, թե այլ երկրներում, չեն կարող որոշել արցախցու եւ ողջ հայ ժողովրդի ճակատագիրը: Առավել վստահ եմ, որ նրանք ժամանակից շուտ կկնքեն իրենց քաղաքական մահը, քանզի չեն հենվում ժողովրդի ներուժի վրա եւ տարված են միայն արտաքին քաղաքական խաղերով:

Չմոռանանք, որ մայիս ամիսը հաղթանակների ամիս է, ուրեմն գործենք այդ հաղթանակների համար»:

Ես չեմ հավատում խաղաղության համաձայնագրին, եթե այն միայն թղթի վրա է լինելու եւ չի արտացոլելու տեղում առկա իրավիճակը. Ռուբեն Վարդանյան

Արցախի մասին ոչ մի որոշում չի կարող կայացվել առանց հաշվի առնելու Արցախի ժողովրդի որոշումը. Ռուբեն Վարդանյանն առցանց հարցազրույց է տվել Արգենտինայի առաջատար լրատվամիջոցներին:

Հասարակական-քաղաքական գործիչ, Արցախի Հանրապետության նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանը Ստեփանակերտից առցանց հարցազրույց է տվել Արգենտինայի առաջատար լրատվամիջոցների մի խումբ ներկայացուցիչների՝ խոսելով Արցախում տիրող իրավիճակի եւ Արցախի նկատմամբ Ադրբեջանի իրական նպատակների, շարունակվող շրջափակման ու ճնշումների մասին:

«Շուրջ 5 ամիս է՝ 120 հազար մարդ Արցախում ապրում է շրջափակման պայմաններում: Ադրբեջանը ձգտում է էթնիկ զտման ենթարկել Արցախի բնակչությանը՝ ստիպելով մեզ լքել մեր հայրենիքը, որտեղ մենք ապրել ենք հազարամյակներ շարունակ: Եվ չնայած բոլոր սպառնալիքներին եւ դժվարություններին՝ մենք մտադիր չենք լքել մեր տունը եւ հպարտ ենք, որ ապրում ենք այստեղ, ուր ամենուր տեսանելի են հայության սերունդների ժառանգությունը, հայկականության արմատները: Մենք պայքարում ենք մեր հողի վրա ապրելու մեր իրավունքի համար, եւ ի տարբերություն Ադրբեջանի՝ մենք որեւէ մեկի վրա հարձակվելու մտադրություն չունենք»,- ասել է Ռուբեն Վարդանյանը:

Պատասխանելով Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության պայմանագրի կնքման հնարավորության մասին հարցին՝ Ռուբեն Վարդանյանը նշել է. «Ես չեմ հավատում խաղաղության համաձայնագրին, եթե այն միայն թղթի վրա է լինելու եւ չի արտացոլելու տեղում առկա իրավիճակը: Ինչպե՞ս կարելի է իրական եւ երկարաժամկետ խաղաղության համաձայնագիր պատկերացնել մի իրավիճակում, երբ մի կողմը կարծում է, որ հաղթողի իրավունքով պետք է բոլոր հնարավոր միջոցներով զիջումներ կորզել մյուս կողմից, մի իրավիճակում, երբ Ադրբեջանը շարունակում է խախտել 2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ համաձայնությունը, մի իրավիճակում, երբ Ադրբեջանը արհամարհում է միջազգային բոլոր կառույցների եւ դատարանների որոշումները: Եվ ամենակարեւորը, Արցախի մասին ոչ մի որոշում չի կարող կայացվել առանց Արցախի ժողովրդի մասնակցության, առանց հաշվի առնելու Արցախի ժողովրդի որոշումը»:

Անդրադառնալով հարցին, թե ինչ կարող է Սփյուռքն անել այս պահին Արցախին օգնելու համար, նա նշել է, որ արցախցիների համար կարեւոր է զգալ, որ իրենք միայնակ չեն. «Իմ կոչն է Սփյուռքին՝ չլինել անտարբեր: Արցախում մարդիկ շատ ուժեղ են, բայց նրանք կարիք ունեն զգալու բոլորի աջակցությունը»:

Մայիսի 9. հանրահավաք Ստեփանակերտում

Մայիսի 9-ին Ստեփանակերտի Սուրբ Աստվածամոր Հովանու Մայր Տաճարում՝ ի հիշատակ Հայրենական մեծ պատերազմում, Արցախյան առաջին, Ապրիլյան եւ 44-օրյա պատերազմներում նահատակված հերոսների մատուցված հոգեհանգստյան կարգից հետո տեղի է ունեցել Խաչերթ դեպի Եղբայրական հուշահամալիր:

Հարյուրավոր աշակերտներ եւ ուսանողներ, իրենց ձեռքերում պահելով Հայրենական մեծ պատերազմում, Արցախյան առաջին, Ապրիլյան եւ 44-օրյա պատերազմներում նահատակված հերոսների նկարները, ՀԱՍԵ Արցախի թեմի սպասավորների առաջնորդությամբ եւ «Ո՛չ Արցախի էթնիկ զտմանը», «Կեցցե՛ Արցախի Հանրապետությունը», «Փա՛ռք անմահ գնդին», «Կեցցե՛ Պաշտպանության բանակը» կոչերով քայլել են դեպի Ստեփանակերտի Եղբայրական հուշահամալիր:

Խաչերթին ներկա էին ԱՀ ԿԳՄՍ նախարար Նորայր Մկրտչյանը, փոխնախարար Լեռնիկ Հովհաննիսյանը:

Պետք է միասին կարողանանք գտնել ուժի այն աղբյուրը, որի հիմքի վրա պետք է կերտենք մեր ապագա հաղթանակները

Եղբայրական հուշահամալիրում ելույթ ունեցավ ՀԱՍԵ Արցախի թեմի Քրիստոնեական դաստիարակության եւ քարոզչության կենտրոնի տնօրեն, արժանապատիվ Տեր Վաչագան քահանա Գյուրջյանը:

«Սիրելի՛ ներկաներ,

Մենք ճանապարհ եկանք դեպի նրանց ժամանակավոր բնակարան՝ վկայելով, որ մենք նրանց չենք մոռացել եւ այս նկարների միջոցով, որ յուրաքանչյուրդ մեծ հարգանքով ու ակնածանքով պահում եք ձեր ձեռքում, վկայում եք, որ մեր տղաները ներկա են եւ միշտ լինելու են մեր սրտում:

Գարեգին Նժդեհն ասում է, որ ավելի վախենալու չէ պարտությունը, այլ ավելի վտանգավոր է պարտվողականությունը, երբ մենք մեր ներսում համարում ենք՝ մենք այլեւս ենթակա ենք մշտական պարտության:

Այսօրվա եռատոնը մեզ գալիս է ցույց տալու, որ մենք ի վիճակի ենք նաեւ հաղթելու. Շուշիի հաղթանակը եւ բանակի կազմավորումը մեր հաղթանակն է, այս պարտությունը եւս մերն է:

Պետք է միասին կարողանանք գտնել ուժի այն աղբյուրը, որի հիմքի վրա պետք է կերտենք մեր ապագա հաղթանակները, իսկ այդ ուժի աղբյուրը մեր այս տղաներին հավատարիմ մնալու մեջ է: Նրանք իրենց արյամբ եւս մեկ անգամ սրբացրին Արցախը եւ մեր ուսերին պարտականություն դրեցին՝ երբեք չհրաժարվել Արցախից:

Նահատակների արյունը գծում է ապրողների կյանքի ճանապարհը: Մեր նահատակները գծել են մեր կյանքի ճանապարհը՝ մնալ եւ պայքարել հայկական Արցախի համար: Եթե մենք Աստծո կամոք ծնվել ենք Արցախում եւ կրում ենք արցախցու բարձր կոչումը, ուստի ամեն մեկս ունենք առաքելություն՝ մեր կյանքն ապրելու Արցախի համար, այլապես, որտեղ էլ լինենք, ինչ կյանքի էլ արժանանանք, մեր կյանքը լինելու է կիսատ եւ երջանկությունը՝ թերի, որովհետեւ Աստված մեզ արցախցի ստեղծելով՝ առաքելություն է տվել այս երկիրը պահելու համար»:

Խաչերթը հուշահամալիրում ավարտվել է միասնական տերունական աղոթքով, որից հետո երթի մասնակիցներն ուղղվել են դեպի Ստեփանակերտի Վերածննդի հրապարակ, որտեղ «Ո՛Չ Արցախի էթնիկ զտմանը» պահանջագրի եւ ստորագրահավաքի նախաձեռնող խմբի կողմից կազմակերպվել էր բազմամարդ համաժողովրդական հանրահավաք:

Հանրահավաքի նպատակը հաղթանակների օրը վերահիմնավորելն էր նոր ուխտով՝ Արցախը հայկական պահելու սրբազան ուխտով:

Հանրահավաքի ընթացքում ելույթով հանդես են եկել ՀԱՍԵ Արցախի թեմի Քրիստոնեական դաստիարակության եւ քարոզչության կենտրոնի տնօրեն, արժանապատիվ Տեր Վաչագան քահանա Գյուրջյանը, «Ո՛Չ Արցախի էթնիկ զտմանը» պահանջագրի եւ ստորագրահավաքի նախաձեռնող խմբի անդամ Դավիթ Բաղրյանը, «Մենք ենք մեր սարերը» գործակալության համահիմնադիր, նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանը, արցախյան 3 պատերազմների մասնակից Կարմեն Ավետիսյանը եւ երիտասարդներ:

Նախաձեռնողները տեղեկացրին, որ թղթային եւ առցանց եղանակով հավաքագրվել է 120 000 ստորագրություն, ինչպես նաեւ ներկայացրին Արցախը ապաշրջափակելու իրենց պահանջը, վերահաստատեցին հայրենիքում ազատ, անվտանգ ու անկախ ապրելու իրենց իրավունքին տեր կանգնելը, ցույց տվեցին, որ Արցախը չի հանձնվում եւ որ վճռական են՝ շարունակելու իրենց պայքարը, ինչպես նաեւ զգոնության, սթափության, համախմբման ու պայքարի կոչ ուղղեցին մեր բոլոր հայրենակիցներին՝ Հայաստանում եւ աշխարհում:

Հանրահավաքին մասնակցել են ԱՀ ներկա ու նախկին նախագահները, ԱՀ ԱԺ պատգամավորները:

Վերահիմնավորելով մեր անցած հաղթանակները՝ հավատով ու հույսով լցվենք մեր ապագայի հանդեպ

Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում «Ո՛չ Արցախի էթնիկ զտմանը» պահանջագրի եւ ստորագրահավաքի նախաձեռնող խմբի կողմից կազմակերպված համաժողովրդական հանրահավաքը մեկնարկել է մեկ րոպե լռությամբ եւ ապա միասնական աղոթքով, որից հետո ելույթ է ունեցել ՀԱՍԵ Արցախի թեմի Քրիստոնեական դաստիարակության եւ քարոզչության կենտրոնի տնօրեն արժանապատիվ Տեր Վաչագան քահանա Գյուրջյանն ընթերցել է թեմական առաջնորդ գերաշնորհ տեր Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանի ուղերձը:

««Մի՛ ոտնահարիր ինձ, ո՛վ իմ թշնամի, թե գլորվեցի, նորից կկանգնեմ, քանի որ՝ եթե խավարում նստեմ, Տերն է իմ լույսը»:

Սիրելի՛ հայրենակիցներ,

Աստծուց ներշնչված այս խոսքերով է դիմում իր թշնամիներին Միքիա մարգարեն, երբ իր հայրենակիցների տառապանքը եւ երկրի ավերածությունը տեսնելով՝ Աստծուց փրկություն էր խնդրում իր ազգի համար: Բայց արդարության քարոզիչ լինելով՝ նա թշնամու առաջ ներկայացնում է նաեւ իրենց պարտության պատճառները. «Քանի որ մեղանչեցի Տիրոջ դեմ, համբերությամբ կտանեմ նրա բարկությունը, մինչեւ որ Նա արդարացնի իմ դատաստանը, իրավունք տա ինձ, ինձ հանի դեպի լույսը, եւ ես տեսնեմ Նրա արդարությունը»:

Մայիսյան եռատոնը տարիներ շարունակ բոլորիս համար եղել է ուրախության եւ ուժի աղբյուր: Իհարկե, այսօր մենք չենք կարող ինքներս մեզ խաբելով նույն ոգեւորությամբ տոնել եւ ուրախանալ, բայց չենք կարող նաեւ անտեսել եւ մոռանալ՝ այն պարզ պատճառով, որ ներկայի որեւէ անհաջողություն չի կարող արժեզրկել անցյալում եղած սխրանքը, սերն ու նվիրումը: Ուստի, չնայած այդ տոները դադարել են մեզ համար ուրախության աղբյուր լինելուց, բայց չեն դադարել ուժի աղբյուր լինելուց:

Մեր հայրերը ամբողջական նվիրումով մասնակցեցին երկրորդ համաշխարհային պատերազմին: Պատմությունը հստակ ցույց է տվել, որ չարի ամենավտանգավոր գործիքներից մեկը, որով նա ավեր է գործում ամբողջ աշխարհում, ֆաշիզմն է, որը թե՛ հակամարդկային է եւ թե՛ հակաքրիստոնեական: Ցավոք սրտի, պատմությունն ունի մի անցանկալի հատկություն՝ կրկնվելու բնույթ, եւ պարտված չարիքը ժամանակ առ ժամանակ նորից գլուխ է բարձրացնում: Մենք նորից բախվեցինք ազգային ատելության ու դրա վայրենի դրսեւորումների 44-օրյա պատերազմի ընթացքում, երբ թշնամին հաճույք էր ստանում անօգնական գերիներին խոշտանգելով, որովհետեւ նրանք իրենց ազգից չէին: Նացիզմի այդպիսի մի խայտառակ դրսեւորում էր նաեւ Բաքվում բացված հաղթանակի պուրակը:

Մայիսի 9-ը նաեւ Արցախյան շարժման անդրանիկ զավակի՝ Արցախի Պաշտպանության բանակի ծննդյան օրն է, որը հերոսական ուղի անցնելով՝ հայ ժողովրդին նվիրեց հայրենի երկիր ազատագրելու ուրախությունն ու դարերով չիրականացված երազի իրականացումը: Վերջին ծանր փորձությունից հետո Պաշտպանության բանակը վիրավորվել է, բայց չի մահացել, եւ ի զորու է անսպասելի հրաշքներ գործելու:

Եվ վերջապես, Արցախյան գոյամարտի «մատանու քարը» եղավ ազատագրված Շուշին: Որքան մեծ էր ուրախությունն այն օրերին, նույնքան եւ ավելի խորն է կորստի ցավն այսօր: Աստծո նախախնամությամբ օրվա ռազմական ու հոգեւոր իշխանությունները որոշեցին Շուշիի ազատագրման օպերացիան սկսել Խաչի երեւման տոնի օրը՝ հիշելով հենց այն պատգամը, որ Կոստանդիանոս կայսրը ստացավ Երուսաղեմի երկնքում Տիրոջ Խաչի նշանի հայտնությամբ՝ թե «Սրանով կհաղթես»: Մեր զինվորականները եւ զինտեխնիկան, իրենց վրա սպիտակ խաչի նշանն ունենալով, հայոց բերդաքաղաքի ազատագրումը վերածեցին լեռներում կատարված մի մեծ հարսանիքի:

Հայրենիքի կերտման գործում հաղթանակ նվաճելը դեռ գործի կեսն է, մյուս կեսը այդ հաղթանակը պահելն ու դրան արժանի լինելն է: Հաճախ մենք մեծարում ենք մեր նահատակներին եւ հաղթանակը ենթագիտակցորեն վերագրում միայն նրանց ու բավարարվում սրանով: Բնականաբար, նրանց զոհողությունն ամենամեծն է ու անգնահատելին, բայց նրանց բաժին գործն արդեն կատարված փաստ է, իսկ ապրողների գործը եւ պատասխանատվությունը մնում է ընթացքի մեջ, որպեսզի կարողանան պահել արյամբ ձեռքբերվածը: Ցավոք, շատ հաճախ հաղթում ենք արյունոտ պատերազմներում եւ պարտվում անարյուն պատերազմում:

Երբ մենք հավատարիմ եղանք Տիրոջ Խաչի խորհրդին, որ նշանակում է սեր առ Աստված եւ հայրենիք, այն ժամանակ ունեցանք մեծ հաղթանակներ, բայց երբ խաղաղ ժամանակ հեռացանք Խաչի խորհրդից, մեզ վրա հասավ պատուհասն ու հայրենիքի կորուստը: Փոխանակ խոնարհությամբ ու արժանապատիվ կերպով Աստծուց մեզ շնորհված հաղթանակին տեր կանգնելու, մենք հպարտացանք, մեծամտացանք ու սկսեցինք վատնել մեր հաղթանակն ու ժամանակը: Կարող է խիստ հնչել, բայց Արցախը կործանման տարանք մենք, որ Աստծո օգնությամբ ազատագրել էինք Արցախը:

Բայց ոչինչ անհետ կորած չէ, եւ փրկություն միշտ էլ կա: Այսօր մեր հարեւանները, չարի ձեռքին գործիք դարձած, փորձում են հենց չարի վաղեմի զենքերով ընկճել մեզ: Վախ, անորոշություն, հացի խնդիր եւ նյութական նեղություններ, որոնցով փորձում են մեզ ներքաշել քաոսի մեջ: Իսկ չարի դեմ մարտնչելու զենքերը մեզ համար միշտ էլ իրական են ու հասանելի: Հույս, հավատ, սեր. ահա սա է իրականում Խաչի ամբողջ իմաստն ու խորհուրդը եւ քաոսը հաղթահարելու գինանոցը: Ինչքան էլ տարբեր հարթակներում բանակցություններ լինեն, մենք, որպես հավաքական ազգ, պիտի հասկանանք, որ առաջին հերթին պիտի հաջողենք Աստծո հետ բանակցություններում, իսկ Աստված դիվանագիտորեն չի բանակցում, այլ պարզ եւ հստակ. «Դարձեք դեպի ինձ, եւ ես կդառնամ դեպի ձեզ»: Ինչքան էլ փակ լինեն բոլոր ճանապարհները եւ բոլոր դռները, Աստծո ողորմության դուռը միշտ բաց է, իսկ բանալիները՝ մեր ձեռքում:

Ուստի, սիրելինե՛ր, վերահիմնավորելով մեր անցած հաղթանակները՝ հավատով ու հույսով լցվենք մեր ապագայի հանդեպ, ապավինենք Աստծուն եւ մեր միասնական բազկի ուժին, ու ժամագրքի աղոթքով առ Աստված դիմենք՝ ասելով. «Թագավոր խաղաղության, մեր անձերի Փրկիչ՝ Քրիստոս Աստված մեր, պարսպած պահի՛ր Քո ժողովրդին, սուրբ եւ պատվական Խաչիդ հովանու ներքո՝ խաղաղությանդ մեջ, փրկի՛ր տեսանելի եւ անտեսանելի թշնամուց, եւ արժանի արա գոհությամբ Քեզ փառավորելու՝ Հոր եւ Սուրբ Հոգու հետ. այժմ եւ հավիտյան ներում: Ամեն»:

→ 4

Մայիսի 9. հանրահավաք Ստեփանակերտում

3 ←

Չկան անլուծելի խնդիրներ, կա պակաս մեծ ցանկության եւ մեծ հավատքի

Համաժողովրդական հանրահավաքի ընթացքում ելույթով հանդես է եկել արցախյան երեք պատերազմներում իր մարտական ուղին կերտած ազատամարտիկ Կարմեն Ավետիսյանը:

«Բարեւ ձեզ, սիրելի՛ հայրենակիցներ, հարգարժա՛ն հյուրեր, ես իմ եւ բոլոր ազատամարտիկների անունից շնորհավորում եմ մեր Եռատոնը:



Ոչ մի ժամանակ հեշտ չի եղել, եւ առաջին պատերազմի ժամանակ մեր սերունդը կատարել է այն, ինչը որոշ մարդկանց թվացել է անհնարին: Հաղթանակել ենք, որովհետեւ եղել ենք միասնական, որովհետեւ ամեն մեկը պատասխանատվություն է կրել վաղվա օրվա, մեր պետականության, մեր հայրենիքի գոյատեւման, մեր ժողովրդի գոյության համար:

Այսօր կարիք կա միասնության: Այսօր մենք գտնվում ենք ձեռքերը բաց վիճակում, բայց կարիք կա բռունցքվելու: Երեւի հաղթանակը ուժով է: Ինչպես Նժդեհն է ասել՝ ուժն է ծնում իրավունքը, բայց ոչ միայն բազկի, այլեւ ոգու, այլեւ մտքի: Համատեղ այդ ուժերի շնորհիվ կարող ենք մենք հաղթահարել ցանկացած դժվարություններ:

Չկան անլուծելի խնդիրներ, կա պակաս մեծ ցանկության եւ մեծ հավատքի: Հավատը մեզ ուղեկցում է, ցանկությունը մեզ ուժ ու եռանդ է տալիս:

Եկե՛ք միասնական լինենք եւ այս պահին, ժողովո՛ւրդ, հարազատնե՛րս, ձեր անունից եկե՛ք միասին պահանջենք. խնդրենք՝ որպես եղբայր, քույր, պահանջենք՝ որպես մեր երկրի քաղաքացիներ. միացե՛ք մեզ, քաղաքական ուժեր, մեր պետականության թիկունքում կանգնեք, կայացրե՛ք մեր պետական համակարգը, համախմբվե՛ք եւ ուղեկցե՛ք մեզ:

Մեր ժողովուրդը հրաշք ժողովուրդ է, ցանկացած կանչի հավատում է: Ժողովրդին վստահություն է պետք, որ մենք գնում ենք ճիշտ ճանապարհով:

Հավաքվե՛ք այն տաճարի, այն կամարի տակ, որտեղից լույսն է տաճար թափանցում, եւ գտե՛ք այն ճանապարհը, որով պետք է ուղեկցեք մեր ժողովրդին, ու կտեսնեք, որ ցանկացած դժվար, անլուծելի խնդիր լուծվում է:

Եկե՛ք ազնիվ լինենք մեր խղճի առաջ, Աստծո առաջ: Աստված օգնում է նրան, ով ցանկություն ունի պայքարելու: Մենք ընտրել ենք այդ պայքարի ուղին, ուրեմն՝ չպետք է շեղվենք:

Միասնական լինենք:

Ի գործ միասնության»:

Մենք դրսեւորեցինք միասնական կամք մեր ներկայի եւ ապագայի նկատմամբ

Վերջին մի քանի օրերին իրականացվող «Ո՛չ Արցախի էթնիկ զտմանը» պահանջով ստորագրահավաքներն իրականացվում էին կամավորների ջանքերի շնորհիվ: Վերածննդի հրապարակում տեղի ունեցած հանրահավաքի ժամանակ իրենց խոսքն են ասել նաեւ նրանք:

«Սիրելի՛ արցախցիներ,

Այսօր այստեղ ձեր առջեւ կանգնած են մեր Արցախի երիտասարդները, ովքեր միավորվել են մի գաղափարի շուրջ՝ հայրենիքի՝ Արցախի Հանրապետության հանդեպ մեր պարտքը, քաղաքացիական պատասխանատվությունը հստակ ժամանակահատվածում իրականացնելու համար:

Արցախը մեր հայրենի հողն է, այս հողում մենք ապրել ենք հազարամյակներ շարունակ, ապրել ենք քոչվոր ցեղախմբերից առաջ, դավաճան Շահնազարից առաջ եւ ապրելու ենք հավերժ: Այսօր մենք չենք կարող անտարբեր մնալ՝ լուռ հետեւելով, թե ինչպես են մեր ձեռքից խլում մեր հայրենիքը:

Մենք պատրաստ ենք ցանկացած ձեւով հակառակորդին հակահարված տալու եւ ասելու, որ մենք ապրում ենք այստեղ եւ ոչնչի դեմ կանգ չենք առնի: Մեզ համար կարեւոր է ստուգել մեր ուժերը, ինքներս մեզ ապացուցել, որ գիտենք՝ ինչպես գործել՝ կազմակերպված եւ հետեւողական»,- ասել է Գեւորգ Իսախանյանը:

«Ձեզանից շատերին ծանոթ են մեր դեմքերը, քանի որ վերջին մի քանի օրերի ընթացքում Ստեփանակերտի փողոցներում եւ Արցախի տարբեր գյուղերում մենք ենք իրականացնում հանրահավաքի ստորագրահավաք:

Մեզ ասում էին, թե մարդիկ կվրդովվեն, կհոգնեն, որ շատերը չեն հասկանա մեր նախաձեռնությունը, իսկ իրականում մենք ստացանք լրիվ հակառակ պատկերը: Մենք տեսանք, որ տարբեր մասնագիտության եւ տարիքի մարդիկ՝ երիտասարդ, տարեց, կանայք ու երեխաներ աջակցում են մեզ ու կիսում մեր գաղափարը: Մենք աջակցություն ստացանք նույնիսկ այն մարդկանցից, ովքեր բնակվում էին հեռավոր վայրերում եւ որտեղ հասնելը մեզ համար դժվար էր: Մարդիկ իրենք էին գտնում մեզ ու ցանկություն հայտնում աջակցելու:

Այս ակցիայի շնորհիվ մենք դրսեւորեցինք մեր միասնական կամքը՝ ներկայի եւ մեր ապագայի նկատմամբ»,- նշել է Իսկուհի Աբրահամյանը:

«Ստորագրահավաքին միացել են հազարավոր հայրենակիցներ եւ Արցախի բարեկամներ Հայաստանում եւ այլ երկրներում: Այս մի քանի օրվա ընթացքում մենք հասցրել ենք հավաքել 120 000 ստորագրություն, ինչպես թղթային, այնպես էլ առցանց տարբերակով: Այդ ստորագրությունները մեր համախոհները կփոխանցեն Երեւանում ՀՀ կառավարությանը, ՌԴ, ԱՄՆ եւ Ֆրանսիայի Հանրապետության դեսպանատներին, ինչպես նաեւ ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակին:

Միասին մենք Արցախ ենք, միասին մենք անպարտ ենք»,-իր խոսքում ասել է Գեւորգ Իսախանյանը:

Ելույթից հետո երիտասարդները հայերեն, ռուսերեն եւ անգլերեն ներկայացրել են հանրագրի ամփոփ բովանդակությունը:

Մեզ միացնողը մի գաղափար է՝ մեր հայրենիքը փրկելու հրամայականը

Հանրահավաքին նախաձեռնող խմբի անդամ Դավիթ Բաղրյանը հայտարարել է, որ վրանային պայքարը շարունակվում է, եւ հանրահավաքից հետո եւս մեկ վրան ավելանալու է Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում:

«Սիրելի՛ հայրենակիցներ,

Հաղթանակած սերունդների ժառանգների անունից շնորհավորում եմ ձեզ Եռատոնի կապակցությամբ եւ շնորհակալություն հայտնում բոլոր նրանց, ովքեր մեր ժողովրդին 1992 թ. մայիսին պարգեւել են բերդաքաղաք Շուշիի ազատագրումը: Սա փաստ է, որն արդեն մտել է հայ ժողովրդի պատմության մեջ:

Իմ ձեռքին 2 թուղթ կա. մեկը 1988թ. ստորագրահավաքի թղթերից է, մյուսը՝ մեր այսօրվա ստորագրահավաքի թուղթը: 35 տարի առաջ այս նույն ձեւով է սկսվել նպատակի շուրջ մեր համախմբումը, եւ հիմա էլ այս հանրագիրը նոր համախմբման շարժում է: Սա մի նոր հանրաքվե է՝ վերահաստատելու, որ Արցախն Ադրբեջանի կազմում չի եղել, չկա ու չի լինելու:

Մենք պայքարելու ենք մեր տանը ազատ ապրելու մեր իրավունքի համար: Նրանք, ովքեր ստորագրել են, բարձրացրե՛ք բռունցքները, որպեսզի աշխարհին ցույց տանք, որ սա բոլորիս պահանջն է, որ մենք Արցախի Հանրապետությունն ենք, մենք Ադրբեջանը չենք, եւ մենք ենք տերը մեր երկրի: Մենք ենք որոշելու՝ ինչպես ապրել, որտեղ ապրել եւ ում հետ բարեկամություն անել:

Ես իմ հազարավոր հասակակիցների անունից դիմում եմ ՀՀ մեր հայրենակիցներին՝ միացե՛ք մեզ, թույլ մի՛ տվեք, որ Հայաստանի գործող իշխանություններն Արցախի անունից ստորագրեն փաստաթղթեր, կամ այնպիսի հայտարարություններ անեն, որոնք վտանգի տակ կդնեն Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքը:

Դիմում ենք Արցախում խաղաղապահ առաքելություն իրականացնող ՌԴ զորախմբին՝ անվերապահորեն կատարեք ձեր պարտականությունները, տեր կանգնեք ՌԴ նախագահի անմիջական ջանքերով եւ միջնորդությամբ ստորագրված եռակողմ փաստաթղթի դրույթներին:

ԱՀ իշխանություններին՝ կոչ ենք անում եւ պահանջում ճիշտ գիտակցել ժողովրդի հանդեպ ձեր պատասխանատվությունն ու չտրվել արտաքին ազդեցություններին, տեղի չտալ Ադրբեջանի օրեցօր աճող պահանջներին: Առաջնորդվե՛ք միմիայն Արցախի ժողովրդի կամքով:

Այսօր մենք առավել շատ մտահոգված ենք ոչ միայն ապօրինի տեղադրված անցակետով, եռակողմ հայտարարության խախտված դրույթներով, այլ ավելի շատ մեր այն հայրենակիցների ճակատագրով, որոնք լրիվությամբ մնացել են շրջափակման մեջ, եւ կտրվել է նրանց կապը մայրաքաղաք Ստեփանակերտի եւ մնացած այլ համայնքների հետ: Խոսքը Շուշիի շրջանի Հին շեն, Մեծ շեն, Լիսագոր եւ Եղծահող համայնքների մեր քույրերի, եղբայրների մասին է: Եթե իրենց հետ մի բան պատահի, Աստված չանի, դուք եք պատասխան տալու:

Ժողովո՛ւրդ, այսօր մեզ ղեկավարներ պետք չեն: Միայն ղեկավար լինելը քիչ է: Մեզ պետք են առաջնորդներ, լիդերներ, որոնք կարող են ժողովրդին մի գաղափարի շուրջ համախմբած պահել, որպեսզի ամեն մեկը վերմակը դեպի իրեն չքաշի, մի մուրճով մի մեխ խփեն:

Այստեղից հայտարարում եմ, որ մեր վրանային պայքարը չի ավարտվում: Այսօրվանից մի վրան էլ Վերածննդի հրապարակում ենք տեղադրելու: Մեր պայքարն անկոտրուն է: Մեզ միացնողը մի գաղափար է՝ մեր հայրենիքը փրկելու հրամայականը»:

→ 5

Մայիսի 9. հանրահավաք Ստեփանակերտում

4 ←

Արժանապատվությունը բոլորի համար է, ոչ թե՝ միայն արցախցիների

Տեղի ունեցած համաժողովրդական հանրահավաքի ընթացքում ելույթով հանդես է եկել «Մենք ենք մեր սարերը» գործակալության համահիմնադիր, նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանը:

«Բարեւ ձեզ, հարգելի՛ արցախցիներ,

Առաջին հերթին ուզում եմ մեզ բոլորիս շնորհավորել: Մայիսի 9-ը լինելու է միշտ մեր տոնը, մենք միշտ նշելու ենք մեր հաղթանակները եւ կերտելու ենք նոր հաղթանակներ, համոզված եմ:

Շատ շնորհակալ եմ, որ այսօր երիտասարդները հրավիրեցին ինձ ելույթ ունենալ եւ միասին լինել: Գիտե՞ք՝ սա երեւի ներկայիս Արցախի ամենակարեւոր օրերից է: Լինելով տարիքով ավելի մեծ՝ ուրախ եմ, որ դուք եք այստեղ կանգնած, դուք եք սա կազմակերպել, դուք եք այս շարժումն սկսել, ապրե՛ք, շնորհավորում եմ ձեզ:

Ես վստահ եմ, միայն դուք կարող եք կերտել արժանապատիվ ապագա ձեզ համար եւ ամբողջ Արցախի համար: Այսօր ես շատ եմ օգտագործելու արժանապատվություն բառը, որովհետեւ վստահ եմ՝ դա ամենախորքային, արմատային առավելությունն է: Մենք միշտ եղել ենք արժանապատիվ ազգ, արժանապատիվ հայ, արժանապատիվ արցախցի, եւ պահելու ենք այդ արժանապատվությունը՝ չնայած բոլոր դժվարություններին: Գիտե՞ք, մենք բոլորս իրար հետ միասին քննարկման ժամանակ գծել ենք 6 կարմիր գծեր, որոնք անընդունելի են արցախցիների համար:

Ապրիլի 23-ին Ադրբեջանը խախտեց այդ կարմիր գիծը՝ դնելով անցակետ, որը ստուգելու է մեր անձնագրերը: Ես ուզում եմ ձեզ հետ խոսել հասարակ լեզվով. կարմիր գիծն ինձ համար այն է, երբ դու չես կարող ասել, որ դա քեզ հետ չի կատարվում, ես ձեզ լավ չեմ լսել, ես գուցե ճիշտ չեմ հասկացել: Պատասխանը միակն է՝ պետք է պայքարել, ուրիշ տարբերակ չկա, հակառակ դեպքում դու դառնում ես ստրուկ, ոչ արժանապատիվ մարդ, քո վրայով կարող են անցնել՝ ոտքերը սրբելով: Ինձ եւ բոլորիս համար այդ կարմիր գծերը պետք է հստակ լինեն, որովհետեւ մենք իրավունք չունենք թույլ տալու, որ մեր անձնագրերը ստուգի ուրիշ պետություն: Ոչ ոք չպիտի սահմանափակի մեր ազատ մուտքն ու ելքը դեպի Հայաստան: 159 օր մենք շրջափակման մեջ ենք, չունենք գազ, չունենք լույս: Դուք գիտեք Սարսանգի ջրամբարի վիճակը: Մենք ունենք բազմաթիվ խնդիրներ, բայց դիմանում ենք ու չենք ընկճվում: Այո՛, ծանր է վիճակը, բայց մենք գիտենք մի բան՝ այսպես ոչ մի ռեինտեգրացիայի մասին խոսք լինել չի կարող, սա ռեօկուպացիա է, իսկ մենք թույլ չենք տալու ռեօկուպացիա ոչ մեկին: Ասենք ո՛չ ռեօկուպացիային, ո՛չ, ո՛չ, ո՛չ:

Մենք պաշտպանում ենք մեր տունը, մեր քաղաքները, մեր գյուղերը, մեր գերեզմանները, մենք պաշտպանում ենք մեր իրավունքը՝ մեր հողի վրա ապրելու, ապրելու այնպես, ինչպես մենք ենք որոշում, ոչ թե ուրիշը: Մենք ոչ ոքի վրա չենք ուզում հարձակվել, այլ ուզում ենք ուղղակի հանգիստ, երջանիկ ապրել մեր հողի վրա, մեր հայրենիքում:

Մենք պատրաստ ենք բանակցությունների, սակայն բանակցությունները չեն կարող լինել ատրճանակը գլխին դրած: Բանակցությունները պետք է լիեն երկու կողմերի հարգանքով: Բանակցություններ պետք է լինեն միայն այն ժամանակ, երբ մենք, որպես անկախ Արցախ, կարողանանք նստել եւ խոսել հարեւանի հետ:

Մենք ունենք նպատակ, որը կերտվել է 1988-ին՝ ունենալ ազատ, անվտանգ, երջանիկ եւ հայկական Արցախ, ու այդ նպատակը չի փոխվել: Մենք այդ նպատակը վերահաստատել ենք բազմիցս, եւ այս օրերին շատ կարեւոր է այն եւս մեկ անգամ վերահաստատելը:

Ես շատ ուրախ եմ, որ բոլորդ միացել եք հանրագրին, որովհետեւ սա յուրահատուկ հանրագիր է: Այն ոչ թե դիմում ու պահանջում է ուրիշներից, այլ երիտասարդներն ասում են՝ լուծեք հարցերը, չե՞ք կարողանում, մենք ենք լուծելու՝ ինչպես կարող ենք: Մենք չենք թողնելու, որ հարցը չլուծվի: Մենք ենք լուծելու մեր անվտանգության, մեր հայրենիքի ապագայի հետ կապված հարցերը: Շատ կարեւոր է արժանապատիվ մնալը:

Ես դիմում եմ ամբողջ հայությանը: Ես վստահ եմ, որ մեր կողքին եք, բայց դուք պետք է դա ցույց տաք: Որտե՞ղ են մեկ միլիոն ստորագրությունները, ինչո՞ւ է միայն 120 000: Ինչո՞ւ ամբողջ հայությունը մեր կողքին կանգնած չէ: Արժանապատվությունը բոլորի համար է, ոչ թե միայն արցախցիների: Մենք բոլորս միասին դա պիտի անենք:

Ես հասկանում եմ, որ Հայաստանի կառավարությունն ունի խնդիրներ, որպես պաշտոնյա՝ մարդիկ ինչ-որ սահմանափակումներ ունեն, բայց ի՞նչն է խանգարում ձեզ հայ մնալ, մարդ մնալ, միանալ այս շատ կարեւոր շարժմանը: Ձեր ընտանիքները ինչո՞ւ չեն ստորագրել, ձեր երեխաները ինչո՞ւ չեն ստորագրել: Որտե՞ղ եք դուք: Դուք նախ պետք է ցույց տաք, որ հայ եք, հետո՝ ղեկավար:

Կարեւոր է իմանալ, որ արժանապատվությունը շատ դժվար է կերտվում ու շատ հեշտ կորսվում: Թույլ մի՛ տվեք դա: Որտե՞ղ եք բոլորդ, որ գոռում եք Արցախի մասին՝ նստած ձեր տաք տեղերում: Ինչո՞ւ կանգնած չեք Արցախի կողքին: Արցախը միայն արցախցիների համար չէ, այլ ամբողջ հայության: Հավատացեք՝ ուրիշ տարբերակ չկա: Արցախը չլինի՝ չի լինի հայկական աշխարհը:

Այսօր մեծ հաղթանակի օր է: Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի օրն է: Ես ուզում եմ դիմել ռուս զինվորներին, խաղաղապահներին, ովքեր այստեղ կանգնած են մեր կողքին: Ձեզ ամեն ձեւով ուզում են ճնշել: Ադրբեջանական անցակետը նաեւ ձեր դեմ է արվել: Նրանք ուզում են, որ դուք այստեղ չլինեք, որ ամեն հնարավոր ձեւով պառակտեն ձեզ, որ այստեղից դուրս գաք, որ հայերը հիասթափվեն: Չի՛ ստացվելու, որովհետեւ մենք իրար հետ անցել ենք հայրենական պատերազմով, մենք իրար կողքի ենք հիմա, եւ Ադրբեջանին չի հաջողվելու հանել խաղաղապահներին այստեղից: Ես վստահ եմ՝ դուք էլ եք դա հասկանում, ուստի մենք իրար հետ, կողք կողքի ամեն ինչ պետք է անենք, որ կատարեք ձեր պարտավորություններն այնպես, ինչպես որ պետք է: Այո՛, գիտեմ՝ դժվար է, բայց դուք պարտավոր եք դա անել, իսկ մենք ձեր կողքին կկանգնենք:

Ես ուզում եմ դիմել միջազգային կազմակերպություններին, տարբեր երկրների ղեկավարներին: Որտե՞ղ է ձեր արժանապատվությունը: Ադրբեջանը թքում է ձեզ վրա՝ ասելով՝ չեմ ենթարկվում ոչ մի դատարանի որոշման, ոչ մի պայմանագրի: Այդ ի՞նչ է, արժանապատվություն չունե՞ք, ուժ չունե՞ք, չե՞ք կարող ասել՝ Ադրբեջա՛ն, դու ո՞վ ես, կատարի՛ր այն, ինչ ստորագրել ես:

Մեր բոլոր ղեկավարները տարբեր մակարդակներում պետք է հասկանան՝ հայրենական պատերազմի ժամանակ դու ղեկավար չես, դու ղեկավար-առաջնորդ ես: Քո խոսքը, քո պահելաձեւը, քո ամեն քայլը շատ կարեւոր է մարդկանց համար: Մեզ մոտ կուտակված է շատ հզոր էներգիա, որը ես զգում եմ ամեն օր: Այդ էներգիան պահանջում է, որ մենք (մարդիկ, ովքեր ունեն ունակություն) վերցնենք մեզ վրա պատասխանատվություն ու բոլորին համախմբենք, դառնանք մի գունդ, մի պատ, որը կպաշտպանի մեր հայրենիքը:

Ճգնաժամը շատ մեծ վտանգ է, բայց եւ մեծ հնարավորություն: Երեւի այս ճգնաժամը մեզ հնարավորություն է տալիս մաքրվելու, հասկանալու մեր սխալները, նաեւ փոխվելու: Այս ճգնաժամն է մեզ հնարավորություն տալիս 30 տարվա մեջ կուտակված սխալները դնել մի կողմ ու սկսել նոր կյանք, նոր ձեւով, նոր մոտեցմամբ՝ արդար, թափանցիկ: Երբ պետությունն ու ժողովուրդը զգում են հավատ ու իրար հետ միասին են կառուցում անվտանգությունը, գիտեն՝ ինչ է պետք անել:

Ես շատ ուրախ եմ ձեզ այսօր ներկայացնել մեր աշխատանքը, որ արել ենք վերջին 2 ամիսների ընթացքում: Մասնակցել են 4 կուսակցությունների ղեկավարներ, տարբեր ՀԿ-ների ղեկավարներ, երիտասարդներ, տարեցներ, Սփյուռքից, բոլորը մասնակցել են քննարկումներին, թե ինչպես են տեսնում Արցախի ապագան: Դա շատ կարեւոր էր, եւ մենք ունենք այդ տեսլականը, եւ ոչ միայն տեսլականը, այլեւ ճանապարհային քարտեզը, քայլերի, նպատակների կոնկրետ ցուցակը: Մենք այն փոխանցել ենք ԱՀ նախագահին, ԱՀ ԱԺ ղեկավարին եւ բոլոր այն մարդկանց, ովքեր պատրաստ են այդ ծրագրով առաջ գնալու: Մենք իրար հետ կարող ենք դա անել, սակայն ուզում եմ ասել, եթե դուք չեք անելու, մենք, միեւնույն է, անելու ենք, որովհետեւ ուրիշ ճանապարհ չկա: Մենք ասել ենք եւ ասում ենք. իհարկե, շատ դժվար է ճանապարհը, շատ խնդիրներ կան, բայց մենք այսօր պետք է խոսքից անցնենք գործի:

Մեր տեսլականի մեջ շատ կարեւոր մի բան ունենք. ի՞նչ է նշանակում հայրենական պատերազմ: Հայրենական պատերազմ՝ նշանակում է, որ մենք բոլորս ենք զինվոր, ոչ թե միայն բանակը: Պետք է ընդունենք այն եւ ենթարկվենք դրան: Իսկական ռազմական իրավիճակ պետք է ստեղծվի այստեղ, որպեսզի հասկանանք, որ ուրիշ ձեւ չկա: Մենք պետք է սահմանափակենք մեզ եւ հասկանանք, որ մեր պահելաձեւը պետք է լինի ավելի կտրուկ, ավելի խիստ: Այո՛, պատժի մեխանիզմները պետք է լինեն ավելի կտրուկ, այո՛, մենք պետք է սահմանափակենք ինչ-որ օրենքների կատարումը, պետք է անենք ցավալի քայլեր: Շատ դժվար է, ուրիշ ճանապարհ չկա: Մենք չենք կարող հաղթել դրսի թշնամուն, եթե մենք մեր մեջ այդ ուժը չունենանք:

Մենք անպայման պետք է շփվենք ժողովրդի հետ: Ես չեմ ընդունում, որ ուղղակի հայտարարություններ ենք անում: Մենք մեր ծրագրերն իրականացնում ենք, սակայն ժողովուրդը չգիտի: Ես գիտեմ, որ բանակում մեծ գործ է արվում, գիտեմ, որ տարբեր ուղղություններով աշխատում են, սակայն մարդիկ չգիտեն: Երբ գնում եմ համայնքներ, մարդիկ ասում են՝ ոչ մի բան չկա, շատ վատ է ամեն ինչ, սակայն այդպես չէ: Շփումը քիչ է, ժողովուրդը պետք է հասկանա՝ ինչ ենք անում մենք միասին:

Այս հայրենական պատերազմը միակ ճանապարհն է համախմբվելու, եւ դրա համար, ղեկավարնե՛ր, դուք պետք է լինեք արժանապատիվ մեր ժողովրդի համար, որովհետեւ ուրիշ ձեւ չի լինելու: Մարդիկ պետք է ձեզ հավատան ու հարգեն, դա շատ կարեւոր է:

Պայքարը Արցախի համար ոչ թե միայն մարտական քայլերն են, դա նաեւ մարդկանց պահելաձեւն է՝ մեր մտքերի մաքրությունը, սկզբունքներին պինդ կառչելը, առանձին կարեւոր նպատակները երկրորդելու եւ ընդհանուր նպատակներն առաջին տեղում դնելու պատրաստակամությունը:

Մենք ձեզ հետ այսօր կերտում ենք պատմություն, եւ պատմության մեջ մենք ենք մնալու, ոչ թե վախկոտները, ոչ թե կոռումպացված մարդիկ, ոչ թե մարդիկ, որ անտարբեր են եղել: Մենք ենք մնալու պատմության մեջ՝ որպես մարդիկ, ովքեր կանգնել են հայոց աշխարհում ու պաշտպանել մեր արժանապատվությունը:

Վստահ եմ՝ դա լինելու է այս դարերի պատմության ամենակարեւոր էջը»:

Վահագն ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հարափոփոխ պաշտոններ Արցախում

44-օրյա պատերազմից հետո Արցախի ներքին քաղաքական կյանքը բավականին հեղհեղուկ էր. մի քանի անգամ լրիվությամբ փոխվել է կառավարության կազմը, նշանակվել են նոր պետական նախարարներ ու նախարարներ: «Ապառաժ»-ը հակիրճ ներկայացնում է նրանց պաշտոնավարման ժամկետները եւ մեջբերումներ հանրային խոսքից: Նախորդ համարներում ներկայացրել էինք ԱՀ պետական նախարարների, ԱՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի, սոցիալական զարգացման եւ միգրացիայի, առողջապահության, գյուղատնտեսության, տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունների մասին: Այս համարում կեզրափակենք թեման:

ԱՀ արդարադատության նախարարություն

ԱՀ նախագահի 2020 թվականի հունիսի 4-ի հրամանագրով ԱՀ արդարադատության նախարար է նշանակվել **Սիրան Ավետիսյանը**, ազատվել է 2020թ. նոյեմբերի 16-ին:

Իր հրաժարականի դիմումի մեջ Սիրան Ավետիսյանը նշել է. «Այսպիսի որոշումը պայմանավորված է իմ քաղաքական հայացքներով. այն է՝ մեզ վստահության քվեով օժտած ժողովրդին տված խոստումներին հավատարիմ մնալը, մասնագիտական գործունեության ընթացքում բացառապես ազգային գործունեություն ծավալելը, երկրի կայուն զարգացմանը ծառայելը: Իմ պաշտոնավարման ընթացքում հնարավորինս փորձել եմ նպաստել արդարադատության ոլորտի դրական փոփոխությունների իրականացմանը»:

ԱՀ նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 18-ի հրամանագրով արդարադատության նախարար է նշանակվել **Կարեն Դանիելյանը**, ազատվել է 2021թ. մայիսի 5-ին:

«Համոզված եմ, որ Ժիրայր Միրզոյանն իր փորձն ու գիտելիքը կներդնի նախարարության առջեւ դրված խնդիրներին լուծումներ տալու համար»,- պաշտոնից ազատվելուց հետո ասել է Կարեն Դանիելյանը:

2021թ. մայիսի 5-ին **Ժիրայր Միրզոյանը** նշանակվել է արդարադատության նախարար, պաշտոնավարել է մինչեւ 2022թ. դեկտեմբերի 13-ը: Մինչ այդ՝ 2022թ. նոյեմբերի 23-ին, նա ժամանակավոր պաշտոնակատար էր նշանակվել: Ժիրայր Միրզոյանից հետո նախարարի պարտականությունները ժամանակավոր վերապահվել են նախարարի առաջին տեղակալ **Կամո Քոչարյանին:**

«Այսօր արդարադատության նախարարության համակարգը բնականոն աշխատանքային ընթացք ունի, սակայն մի շարք խնդիրներ կան, որոնք այս կամ այն ձեւով ազդում են աշխատանքի արդյունավետության վրա: Խնդիրների մի մասը հնարավոր է լուծել, բայց կան հարցեր, որոնց համակարգային մոտեցում է անհրաժեշտ»,-2021թ. օգոստոսի 13-ին պետնախարար Արտակ Բեգլարյանի հետ հանդիպման ժամանակ նշել է նախարարը:

Ժիրայր Միրզոյանից հետո նախարարի պաշտոնը 2023թ. հունվարի 10-ին ստանձնել է **Սրբուհի Արզումանյանը:**

Արտաքին գործերի նախարարություն

2020թ. մայիսի 29-ին ԱՀ արտաքին գործերի նախարար է նշանակվել **Մասիս Մայիլյանը:**

«Խնդիրները պատասխանատու են, սակայն կցանկանայի վստահորեն ասել, որ Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը, որպես կայացած պետական ինստիտուտ, Հայաստանի եւ Սփյուռքի հետ սերտ համագործակցությամբ կօգտագործի իր ողջ ներուժը՝ այդ խնդիրները հաջողությամբ լուծելու, ներկայիս լուրջ մարտահրավերներին դիմակայելու եւ միջազգային ասպարեզում մեր պետությունն ըստ արժանվույն ներկայացնելու համար»,- ԱՀ ԱԳՆ հիմնադրման 27-ամյակի առթիվ 2020թ. հուլիսի 23-ին հղած ուղերձում նշել է Մասիս Մայիլյանը:

2021թ. հունվարի 4-ին Մասիս Մայիլյանն ազատվել է Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարարի պաշտոնից, **Դավիթ Բաբայանը** նշանակվել է նույն պաշտոնում: 2022 թվականի նոյեմբերի 23-ից մինչեւ 2023թ. հունվարի 11-ը Դավիթ Բաբայանը նախարարի ժամանակավոր պաշտոնակատար էր:

«Շարունակելու ենք ակտիվորեն եւ համառորեն պաշտպանել Արցախի շահերը, մեր անկախությունն ու ինքնիշխանությունը, բոլոր միջոցներով ամրապնդել համահայկական միասնականությունը՝ Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնությունը»,- 2022թ. հունվարի 19-ին մամուլի ասուլիսի ժամանակ ասել է Դավիթ Բաբայանը:

Դ. Բաբայանից հետո 2023թ. հունվարի 11-ին ԱԳՆ ղեկավար է նշանակվել **Սերգեյ Ղազարյանը:** «Հստակ պատասխանատվությունը գիտակցելով՝ կանենք մեզանից կախված առավելագույնը, որ պատվով հաղթահարենք այս դժվարությունները»,- 2023թ. հունվարի 11-ին ասել է նորանշանակ նախարարը:

Ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարություն

Հետպատերազմյան շրջանում ֆինանսների ոլորտը համակարգել են **Գրիգորի Մարտիրոսյանը** եւ **Վահրամ Բաղդասարյանը:** Ընդ որում, Վ. Բաղդասարյանն այդ պաշտոնում մի քանի անգամ ազատվել ու վերանշանակվել է: Պետական նախարար Գրիգոր Մարտիրոսյանը համատեղությամբ նաեւ ֆինանսների նախարար էր:

2021թ. հունիսի 1-ին ստանձնելով ֆինանսների նախարարի պաշտոնը, Վահրամ Բաղդասարյանը նշել է. «Կարվի առավելագույնը, ամեն ինչ, որպեսզի ե՛ւ նախագահի նախընտրական ծրագրի, ե՛ւ կառավարության գործունեության սպասվելիք ծրագրի բոլոր դրույթները պատվով իրականացնենք»:

2021թ. հունվարի 4-ին Վահրամ Բաղդասարյանն ազատվել է ֆինանսների նախարարի պաշտոնից, Գրիգորի Մարտիրոսյանը նշանակվել է ԱՀ պետական նախարար, ֆինանսների նախարար:

Վահրամ Բաղդասարյանը ԱՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարի պաշտոնը ստանձնել է նաեւ 2022 թվականի փետրվարի 10-ին: Նույն թվականի նոյեմբերի 23-ին նա ազատվել է պաշտոնից ու նշանակվել ժամանակավոր պաշտոնակատար: Այժմ նախարարի պաշտոնը կրկին նա է զբաղեցնում:

Քաղաքաշինության նախարարություն

2020թ. մայիսի 26-ից մինչեւ 2023թ. մարտի 8-ը ԱՀ քաղաքաշինության ոլորտը ղեկավարում էր **Արամ Սարգսյանը,** ընդ որում՝ 2022թ. նոյեմբերի 23-ից մինչեւ 2023թ. հունվարի 11-ը՝ որպես նախարարի ժամանակավոր պաշտոնակատար:

Իր հարցազրույցներում քաղաքաշինության նախարարը հիմնականում խոսել է Արցախի տարբեր շրջաններում ընթացող շինաշխատանքների մասին, որոնց անհրաժեշտությունն առաջացել է պատերազմից հետո:

2023թ. մարտի 8-ից ԱՀ քաղաքաշինության նախարարի պարտականությունների կատարումը ժամանակավորապես վերապահվել է նախարարի տեղակալ **Ազատ Համբարձումյանին:**

Ներքին գործերի նախարարություն

Նախարարության կազմավորումից ի վեր՝ Արցախի Հանրապետության ներքին գործերի նախարարը **Կարեն Սարգսյանն** է, նշանակվել է 2021 թ. հունվարի 26-ին:

«Հենց առաջին աշխատանքային օրը մեր առաջ խնդիր դրեցինք՝ ի՞նչն իրապես փոխենք հիմա եւ ի՞նչ պետք է անենք հետո, որպեսզի կարողանանք ընթանալ կայուն զարգացման ուղով: Հարցերի պատասխանը շատ պարզ էր՝ արագ ոտքի կանգնել, լծվել աշխատանքի, ապահովել հասարակական կարգ ու կանոն, պաշտպանել մեր հայրենակիցների իրավունքները»,- 2022թ. փետրվարի 16-ին «Ապառաժ»-ի հետ հարցազրույցում ասել է նախարարը:

ԱՀ պաշտպանության նախարարություն

Արցախի պաշտպանության նախարար Ջալալ Հարությունյանի վիրավորվելուց հետո՝ 2020թ. հոկտեմբերի 26-ին նա ազատվել է զբաղեցրած պաշտոնից, եւ ՊԲ հրամանատարի պաշտոնում նշանակվել է նախկինում հանրապետության զինված ուժերում մի շարք պատասխանատու պաշտոններ զբաղեցրած գեներալ-լեյտենանտ **Միքայել Արզումանյանը**: Վերջինս պաշտոնից ազատվել է 2021թ. սեպտեմբերի 11-ին:

2021 թ. սեպտեմբերի 11-ից առ այսօր պաշտպանության նախարար-Պաշտպանության բանակի հրամանատարը **Կամո Վարդանյանն** է:

Տաթեւիկ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Փաշինյանի ձեռքը պետք է բռնել հենց հիմա, հետո ուշ կլինի. Վարդան Օսկանյան

Ակնհայտ է, որ մտնում ենք Արցախի հանձնման վերջնական փուլ: Փաշինյանի ամեն մի հանդիպում աշխարհագրական որեւէ վայրում առավել խորացնում եւ անշրջելի է դարձնում Արցախի հանձնման գործընթացը:

Մեդիամաքսի սյունակում գրել է ՀՀ նախկին արտգործնախարար Վարդան Օսկանյանը.

«Բրյուսելյան հանդիպման ընթացքում խնդիրն ավելի բարդացավ ու խորացավ, երբ Փաշինյանն ընկավ իր իսկ լարած թակարդը: Այնքան խոսեց 29 800 քառակուսի կիլոմետրի մասին, որ Ալիեւն արդեն ինքն էլ իր երկրի քառակուսի կիլոմետրերի ճանաչման պահանջ դրեց, ինչը, բնականաբար, չի կարող մեկնաբանության տեղ թողնել, որ դրա մեջ չի մտնում Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը:

Շառլ Միշելի նկարագրած դրույթներով որեւէ փաստաթղթի ստորագրում նշանակում է, որ ստորագրման պահից Արցախը վերածվում է Ջավախքի եւ, ի տարբերություն Ջավախքի, որոշ ժամանակ՝ միգուցե մեկ տասնամյակ անց վերածվելու է Նախիջեւանի:

Եթե Փաշինյանի ձեռքը պետք է բռնել, որ նա նման փաստաթուղթ չստորագրի, ապա դրա ժամանակը հենց հիմա է: Այլապես հետո ուշ կլինի: Ես կարծում եմ, որ հայ ժողովուրդն ունի բոլոր տեսակի իրավունքները Փաշինյանին ետ պահելու այդ քայլից:

Նախ՝ Փաշինյանը պարզապես իրավունք չունի նման փաստաթուղթ ստորագրելու:

Առաջին՝ իրավական տեսակետից այդ փաստաթուղթը կհակասի Հայաստանի Սահմանադրությանը եւ անկախ Հայաստանի Գերագույն խորհրդի՝ 1992-ի ընդունած որոշմանը: Նման փաստաթուղթ ստորագրելու եւ վավերացնելու համար պետք է փոխել Հայաստանի Սահմանադրությունը եւ չեղարկել Գերագույն խորհրդի որոշումը:

Երկրորդ՝ նման իրավունք որեւէ մեկին վերապահված չէ: Ընտրություններում մեծամասնություն ունենալը չի նշանակում իրավունք ձեռք բերել հայ ժողովրդի համար գոյութենական հարցում կամայական որոշումներ կայացնելու:

Երրորդ՝ Արցախի ժողովուրդը, որի ֆիզիկական գոյության հարցն է դրված նժարին, եղել է անցած տասնամյակների զրկանքների եւ տառապանքների հիմնական կրողը եւ իր ճակատագիրը որոշելու լիազորություն որեւէ մեկին չի տվել:

Չորրորդ՝ Հայաստանի Ազգային ժողովի հաստատած՝ Փաշինյանի իսկ կառավարության ծրագրում Լեռնային Ղարաբաղի մասով կա դրույթ, ըստ որի՝ հետամուտ պետք է լինել Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացմանը «անջատում հանուն փրկության» սկզբունքի հիման վրա, որի աներկբա իրավունքն ունի Արցախի ժողովուրդը:

Ավելին, սառը պատերազմի ավարտից անմիջապես հետո աշխարհում գոյություն ունեցող հիսունից ավելի ինքնորոշման ընթացիկ շարժումներից մենք՝ հայերս, կլինենք առաջինը եւ միակը, որ հրաժարվում է իր իրավունքներից:

Եթե Հայաստանը, հայ ժողովուրդը, Արցախը երբեւէ պարտադրված կամ կամովին հրաժարվեն ինքնորոշման իրենց անքակտելի իրավունքից եւ ընդունեն Ադրբեջանի ինքնիշխանությունն Արցախի նկատմամբ, ապա դա աշխարհում կլինի նախադեպ, որը մեզ կարժանացնի ժողովուրդների կամային արժանիքների որակավորման ցածր եւ նվաստացուցիչ գնահատականի:

Ցավալին նաեւ այն է, որ այսօր առկա՝ ժողովուրդների ինքնորոշման չորս տասնյակից ավելի շարժումներից ամենաուժեղ ու հիմնավոր պատմական, իրավական եւ քաղաքական հիմքերն ունի հենց Արցախի ինքնորոշման շարժումը:

Պատմականորեն՝ Արցախի ժողովուրդը հազարամյակներ ապրել եւ գոյատեւել է հենց այս տարածքում: Ավելին, այսօր մեր երկու պետությունների՝ հայերով բնակեցված տարածքներից ամենահայկականը հենց Արցախն է: Պատմության ընթացքում, երբ Հայաստանը ենթարկվել է տարբեր ազգերի ասպատակությունների, Արցախը միշտ պահել է առնվազն իր կիսանկախ կարգավիճակը:

Իրավականորեն՝ Արցախի ինքնորոշման իրավունքի հիմքերը պարզապես անխոցելի են: Ինքնորոշման իրավունքի պահանջատիրության հիմնական նախապայմանները նախկինում եւ այսօր ամբողջությամբ բավարարված են:

Քաղաքականորեն՝ Արցախն ունի երեք տասնամյակից ավելի բանակցային նախապատմություն, որի ընթացքում ինչ-որ պահի միջազգային հանրությունը, միջնորդների բերանով, հարցի խաղաղ կարգավորման օպտիմալ միջոց է համարել Արցախի ժողովրդի ազատ եւ անկաշկանդ կամարտահայտությունը:

Ես շարունակում եմ համոզված մնալ, որ չենք սպառել դիվանագիտական հնարավորությունները եւ որ այսօր հայանպաստ լրջագույն այլընտրանքներ կան այն ամենին, ինչ անում են Հայաստանի իշխանությունները: 44-օրյա պատերազմից հետո Հայաստանի դիվանագիտությունը որեւէ լուրջ ջանք գրեթե չի գործադրել հայանպաստ արդյունքի հասնելու համար:

Ցանկացած բանակցությունների արդյունք պետք է առնվազն բարելավի կողմերի հարաբերությունները: Ճանապարհը, որն ընտրել են Հայաստանի իշխանությունները, չի կարող բավարարել այս պայմանը: Միգուցե նման փաստաթղթի ստորագրումը բարեկամական կապեր հաստատի ներկա իշխանությունների եւ Ադրբեջանի միջեւ, բայց վստահաբար չի կարող բարեկամության հիմք ծառայել Հայաստան պետության, հայ ժողովրդի եւ Ադրբեջանի միջեւ»:

Aravot.am

Կյանքից հեռացել է Մուրադ Պետրոսյանը



Մայիսի 13-ին Ստեփանակերտում մահացել է հասարակական-քաղաքական գործիչ, Արցախյան շարժման առաջամարտիկ Մուրադ Պետրոսյանը:

Մուրադ Ազատի Պետրոսյանը ծնվել է 1948թ. հունվարի 1-ին, Ասկերանի շրջանի Շոշ գյուղում: Նա 1983թ. ապրիլի 24-ին Արցախում առաջին անգամ «Մենք ենք մեր սարերը» կոթողի մոտ կազմակերպել է հանրահավաք՝ նվիրված Մեծ եղեռնի զոհերի հիշատակին: Ձերբակալվել է 1985թ. ապրիլի 24-ին Հայոց ցեղասպանությանը նվիրված հանրահավաք կազմակերպելու պատճառով: 1988թ. օգոստոսից մինչեւ 1990թ. հունվար եղել է «Ղարաբաղ» կոմիտեի լիազոր ներկայացուցիչն Արցախում:

1988թ. դեկտեմբերին ձերբակալվել է ԽՍՀՄ ՊԱԿ մարմինների կողմից Արցախ զենք տեղափոխելու փորձի համար: 1989թ. ապրիլին, ազատ արձակվելուց հետո զբաղվել է ինքնապաշտպանական խմբերի կազմակերպմամբ եւ նրանց համախմբմամբ:

Մինչեւ 1991թ. մարտ ամիսը հանդիսացել է Արցախի ինքնապաշտպանական ուժերի միավորված շտաբի համակարգող: Հոկտեմբերին նշանակվել է Արցախի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարի քաղաքական հարցերով առաջին տեղակալ:

1991թ. դեկտեմբերի 28-ին Ստեփանակերտի թիվ 1 ընտրատարածքից ընտրվել է ԼՂՀ 1-ին գումարման Գերագույն խորհրդի պատգամավոր: 1992-1993թթ. ԼՂՀ Պաշտպանության բանակի պարետն էր, սեպտեմբերին՝ ՊԲ հրամանատարի գաղափարաքաղաքական հարցերի գծով տեղակալ:

1995թ. ապրիլի 30-ին Ստեփանակերտի թիվ 6 ընտրատարածքից ընտրվել է ԼՂՀ 2-րդ գումարման Գերագույն խորհրդի պատգամավոր:

Պարգեւատրվել է «Մեսրոպ Մաշտոց» շքանշանով (ԼՂՀ նախագահի թիվ 53-Ա հրամանագիր 30.08.2014թ.), «Մխիթար Գոշ» (ԼՂՀ նախագահի թիվ 72 հրամանագիր 01.09.2006թ.), «Արիության համար» մեդալներով (ԼՂՀ նախագահի թիվ 21 հրամանագիր 19.02.1998թ.):

Aparaj.am

Ս. Բաբայանի աջակիցները համբերելուց, քայլելուց, զրուցելուց հետո ուղարկվեցին տուն

Այսօր՝ մայիսի 15-ին, Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում տեղի է ունեցել «Միասնական հայրենիք» կուսակցության ղեկավար Սամվել Բաբայանի կողմից հրավիրված հանրահավաք:

Հանրահավաքի հիմնական նպատակը Սամվել Բաբայանին պետնախարար նշանակելու պահանջն է եղել:

Սամվել Բաբայանի հասցեին բազում գովաբանական ելույթներից մոտ 2 ժամ անց նախաձեռնող Սամվել Բաբայանը իր աջակիցներին առաջարկել է «կես ժամ համբերել, հանգիստ քայլել, զրուցել իրար հետ, իրենց հարեւաններին, բարեկամներին եւ ինչ-ունեն հրավիրել հրապարակ, քանի որ իշխանությունները տեսնում են հավաքվածների քչությունը, որից հետո ցանկության դեպքում անցնել վճռական քայլերի՝ փակել պետական շենքերի մուտքերն ու ստիպել կատարել իրենց պահանջները»:

Այդ հայտարարությունից շուրջ 45 րոպե հետո նա իր աջակիցներին ուղարկել է տուն՝ ասելով, որ արդեն իշխանություններից պատասխան է ստացել եւ սկսում է

կոնսուլտացիաների փուլ:

Հիշեցնենք, որ Սամվել Բաբայանը հանրահավաքի ընթացքում մի քանի ժամ էր տվել ԱՀ իշխանություններին՝ իրեն պետնախարար նշանակելու համար, հակառակ դեպքում սպառնացել է փակել բոլոր պետական շենքերի մուտքերը:

Հանրահավաքն ավարտվելուց հետո հայտարարությամբ հանդես է եկել ԱՀ նախագահ Արայիկ Հարությունյանը, ով պատրաստակամություն է հայտնել սկսել քննարկումներ ու խորհրդակցություններ՝ նրանց կողմից առաջարկված ծրագրերի շուրջ, եւ հատկապես՝ ընդգծել.

«Այս ճգնաժամային պայմաններում մենք պարտավոր ենք ցուցաբերել զսպվածություն, խոհեմություն եւ պատասխանատվություն՝ առաջնորդվելով բացառապես Արցախի Հանրապետության ու մեր ժողովրդի շահերով»:

Նշենք նաեւ, որ հանրահավաքին մասնակցել է ԱՀ ԱԺ նախագահ Արթուր Թովմասյանը, ով նշել է, որ ինքը մասնակցում է տեղի ունեցող բոլոր հանրահավաքներին եւ պատրաստակամություն է հայտնել դառնալու միջնորդ՝ իշխանությունների հետ երկխոսելու համար:

Վահագն ԽԱՉԱՏՐՅԱՆ

Իմ ասելիքն իմ ծննդով է պայմանավորված

2023թ. փետրվարի 28-ին կյանքից հեռացել է Արցախի գրողների միության նախագահ, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, Գրիգոր Նարեկացի համալսարանի ռեկտոր, բ.գ.դ., պրոֆեսոր Վարդան Հակոբյանը: Վարդան Հակոբյանը Արցախի Հանրապետության պետական օրհներգի հեղինակն է: Հեղինակել է մոտ յոթ տասնյակից ավել գրքեր, բազում գիտական հոդվածներ:

Վարդան Սարգսի Հակոբյանը ծնվել է 1948թ. Արցախի Հադրութի շրջանի Արփագետուկ (Քարինգ) գյուղում, մանկավարժի ընտանիքում: Սովորել է հայրենի գյուղի յոթամյա, Բաքվի N152 եւ հայրենի շրջանի Հին Թաղերի միջնակարգ դպրոցներում: Բանաստեղծություններ սկսել է գրել տասնմեկ տարեկանից: Դպրոցական տարիներին զբաղվում էր նաեւ գեղանկարչությամբ («Եղնիկն ու լիճը» գեղանկարի համար ստեղծագործող դպրոցականների մարզային օլիմպիադայում առաջին մրցանակ է ստացել):

Բաքվի N 152 դպրոցում սովորելու ժամանակ, 9-րդ դասարանում կոմերիտմիությունից հեռացնում են Վ. Հակոբյանին՝ նրան մեղադրելով «շիրազյան ազգամոլության» մեջ: Ազերական հավատաքննիչների ճնշման տակ Վ. Հակոբյանը ստիպված տեղափոխվում եւ ուսումը շարունակում է հայրենի շրջանի Հին Թաղեր գյուղում:

1965թ. բանաստեղծություններն ուղարկում է Շիրազին, ստանում նրա քաջալերանքը եւ կնքվում Վարդան Հակոբյան (անձնագրային անունը՝ Սլավիկ) գրական անվամբ:

Բաքու քաղաքում 60-ական թվականներին, դեռեւս ուսանող ժամանակ աշխատում է (երկու տարի) Բաքվի 26 կոմիսարների անվան մշակույթի հայկական տանը՝ որպես ասմունքող:

1969թ. ավարտում է Բաքվի մանկավարժական ինստիտուտը եւ աշխատանքի անցնում Ստեփանակերտում՝ «Սովետական Ղարաբաղ» թերթի մշակույթի բաժնում, նախ՝ որպես գրական աշխատող, ապա՝ բաժնի վարիչ, խմբագրի տեղակալ:

1983-ից մինչեւ կյանքի վերջը նա աշխատել է Արցախի գրողների միությունում՝ որպես կազմակերպության ղեկավար:

Հիմնադրել եւ խմբագրել է «Արցախ» հանդեսը, «Եղիցի լույս», «Պըլը-Պուղի», «Հարություն», «Նարեկ», «Դպրատուն» պարբերականներն ու «Արցախ», հրատարակչությունը:

Յոթ տասնյակից ավելի բանաստեղծական, գրականագիտական եւ մշակութաբանական ժողովածուների հեղինակ է, որոնք տպագրվել են Երեւանում, Ստեփանակերտում, Մոսկվայում, Բաքվում եւ այլուր:

Մի շարք պիեսների («Հայելիներ», «Քո սերը քո տունն է», «Ես հրաժարվում եմ ինձանից», «Արցախյան բալլադ» եւ այլն) հեղինակ է, որոնք բեմադրվել են ինչպես Արցախի, այնպես էլ մայր Հայաստանի պետական եւ ժողովրդական թատրոններում:

Վ. Հակոբյանի ստեղծագործությունները տպագրվել են ֆրանսերեն, ռուսերեն, ուկրաիներեն, պարսկերեն, վրացերեն, բուլղարերեն, անգլերեն եւ այլ լեզուներով:

ԼՂՀ պետական օրհներգի հեղինակն է:

Վ. Հակոբյանի ստեղծագործությունների մասին տպագրվել են մենագրական մի շարք աշխատանքներ (Ս. Սարինյան, «Բանաստեղծի հայտնությունը», Ս. Խանյան, «Ցավի եւ սիրո պոեզիան», Տ. Սողմոնյան, «Վարդան Հակոբյանի պոեզիայի գեղագիտական համակարգը», «Տաճարի ճանապարհին կամ մենարանի ուխտավորը» եւ այլն):

Վ. Հակոբյանը բանասիրական գիտությունների դոկտոր է (թեման՝ «Հայ նորագույն բանաստեղծության զարգացման հիմնական ուղղությունները»), պրոֆեսոր:

Վ. Հակոբյանը ԼՂՀ ԳՄ վարչության նախագահն էր: Երկար տարիների բուհական-մանկավարժական աշխատանքի փորձ ուներ, հայ գրականության եւ մշակույթի պատմություն, գրականության տեսություն է դասավանդել Արցախի պետական համալսարանում:

Նախաձեռնող խմբի հանձնարարությամբ ղեկավարել է ԼՂ մարզային խորհրդի (1988թ.) պատմական նստաշրջանի անցկացման աշխատանքները:

Ընտրվել է ԼՂՀ Ազգային ժողովի անդամ:

Արցախյան թեմի կողմից հայոց ազգային-եկեղեցական ժողովի պատգամավոր է ընտրվել եւ 1995թ. Սուրբ Էջմիածնում մասնակցել կաթողիկոսական ընտրություններին:

Արցախյան համազգային շարժման ղեկավար մարմնի՝ «Կռունկի» ստեղծման օրից նախագահի տեղակալն էր:

Արցախյան համազգային ազատագրական շարժման ակտիվ գործիչ էր: Արցախը մայր Հայաստանին միացնելու մասին նամակի նախաձեռնողներից ու պատրաստողներից մեկն էր, նամակի տակ առաջին ստորագրության հեղինակը: Ղեկավարել էր Արցախը մայր Հայաստանին միացնելու համար Մոսկվա մեկնած մտավորականների պատվիրակությունը:

Ամուսնացած է, ունի երկու զավակ:

Իր ստեղծագործությունների համար արժանացել է ՀՀ նախագահի, ՀԳՄ «Գրական թերթի», Ավ. Իսահակյանի անվան, ԼՂՀ Եղիշեի անվան, համահայկական «Վահագն» եւ այլ մրցանակների:

Վ. Հակոբյանը պարգեւատրվել է ԼՂՀ «Մեսրոպ Մաշտոց», «Վաչագան Բարեպաշտ», «Երախտագիտություն՝ Արցախի քաջորդիներին», ՀՀ մշակույթի նախարարության ոսկե, ՀՀ պաշտպանության նախարարության «Գարեգին Նժդեհ», ինչպես նաեւ միջազգային մեդալներով՝ Ֆ. Նանսենի, Մ. Շոլոխովի եւ այլն, արժանացել է բազմաթիվ պատվոգրերի ու շնորհավորագրերի:

Հայ գրականության զարգացման գործում ներդրած նշանակալի ավանդի համար Վ. Հակոբյանին շնորհվել է Հայաստանի Հանրապետության մշակույթի վաստակավոր գործչի պատվավոր կոչում:

Վարդան Հակոբյանի վերջին խոսքը ընթերցողին. Մի քանի նկատառումներ կամ զրույց ընթերցողի հետ

Բանաստեղծական ներքին տրամադրությունների հոգեբանական շարժառիթներում պիտի փնտրել ապրումային այն խորքը, որը ներկայացվում է ասելիքում՝ առանց բառերի միջամտության, այլապես ճակատային կոտորակներում ներշնչումը վերածվում է հանգով չափավորված (կամ գուցե՝ անչափ) մի սովորական խոսակցության, ոնց որ ծառի ջարդված ճյուղերը քամու տակ զարկվեն իրար ու միալար ձայներ արձակեն: Ոչ մի պատկերային միջոց, որքան էլ տեղին լինի ու գեղեցիկ, չի կարող դադարած մտքին, որը պոկված նույն շյուղն է, շնչառություն տալ:

Իմ փիլիսոփայությունը մարդն է, ով նման չէ բացարձակապես ոչ ոքի: Եվ նրա ներսում թեեւ նույն տիեզերքն է, ինչ բոլորի մեջ, բայց այդ «նույնը» մերձության աղերս անգամ չունի ընդհանուր շարժման հետ, որքան էլ ընդգրկումների համաչափում մնա: Պոետական խոսքը պիտի այնքան սովորական լինի, որ սովորական խոսքից տարբերվի: «Հավքն իր թռչելու շնորհը նվիրել է այն ծառին, որի տակ հանդիպել ենք»: Ահա ես այստեղ եմ ինձ տեսնում: «Գրականացվող» խոսությունն արվեստում բացարձակ անլրջություն է բոլոր տարբերակներում՝ թե բովանդակությամբ, թե ձեւով:

Իմ նկատառումները, մտային ու զգացական կառուցակարգերի ձեւավորումները, հավատարիմ մնալով գեղագիտական իմ սկզբունքին՝ ուզում եմ շարադրել այսպես՝ բնութագրական գծերի հնարավոր ընդգրկումներով.

Ա. Անսպասելիության տրամաբանությունը գործողությունների զարգացման հաջորդականության մեջ: Անսովորի թիրախավորում:

Բ. Ասելիքի խորքային «անհավաքելիությունը» տողատակերում:

Գ. Երեւույթների որակական կերպարանափոխությունը եւ հայտնության տիեզերական խորհուրդը:

Դ. Ժողովրդական ոճի իմաստասիրությունը՝ անհայտի ընկալման բանալի: Առեղծվածայինը պարզի համապատկերում:

Ե. Ժամանակի եւ տարածության համադրությունը՝ հակադրամիասնության ձեւ:

Զ. Մտածողության ինքնությունն ու ինքնատիպությունը բառում եւ բառից դուրս ծավալվող իրադարձություններում:

Է. Մտքի տարօրինակությունը /պարադոքսալությունը/:

Ը. Քնարականն ու էպիկականը «հոգեզգացական» դրսեւորումներում:

Թ. Հակադիր գաղափարների ներհոսքը խոսքի մեջ եւ ասելիքի ներդաշնակությունը:

Ժ. Իրականություն եւ հակաիրականություն:

Ի. Ցնցումային, արտառոց իրավիճակների մարմնավորումը փոխաբերության (մետաֆորի) տիրույթում, ուր չկա երեւույթի սահմանափակում:

Ես ծնվել եմ, որ կարդամ այն, ինչը դեռ չեմ գրել: Եվ միայն ու միայն ես պիտի գրեմ, քանի որ իմ ասելիքն իմ ծննդով է պայմանավորված: Իմ առաքելությունն է՝ լինելով Վարդան Հակոբյան, հավասարապես գնալ դեպի բոլոր մարդիկ, բայց հասնել ինքս ինձ՝ Վարդան Հակոբյանին, իմ մեջ՝ ամենեցուն: Իսկ ստեղծությունն, իմ խորին համոզմամբ, անհասանելի գերնպատակ է:

Այս խոսքն ընդունեցեք, խնդրում եմ, որպես իմ բանաստեղծությունների ներսից կատարված ինքնանկար: Ու ներեցեք, եթե ինչ որ խազի կամ մեղեդու վրիպում կա:

Իմ ներկապնակն ամեն ինչն է եւ ոչինչը:

Մեծերը՝ Վարդան Հակոբյանի մասին

Վարդան Հակոբյանը տաղանդավոր բանաստեղծ է: Տաղանդավոր բառը օգտագործեցի ոչ պատահական կերպով: Իսկապես, նրա մեջ խոսում է հայկական հավիտենական Արցախը...

ՎԱՉԳԵՆ ԱՌԱՋԻՆ
Ամենայն Հայոց կաթողիկոս

***

Ուրախ եմ, որ օտար ափերուց անունդ դեն ես ձգում, հագնելով հայկական արծվենի անունը՝ Վարդան, այն, որ Ավարայրն է հիշեցնում եւ սաստում է ազգի դավաճաններին...

Ապրես, որ միշտ ստեղծագործում ես... Հուսանք...

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ

***

Խոսքս ուզում եմ սկսել Եվգենի Եվտուշենկոյի հրապարակախոսական հոդվածներից մեկում վերջին տարիներս հաճախակի հիշվող այսպիսի մի արտահայտությամբ. «Պոետը Ռուսաստանում միայն պոետ չէ»: Ես կասեի, որ հայ բանաստեղծը կրկնապես ավելին է: Եվ այսօրվա առիթով ուզում եմ ընդգծել՝ Ղարաբաղի բանաստեղծը եռակի բանաստեղծ է, շատ ավելին է, քան բանաստեղծը: Այն հանգամանքը, որ տաղանդավոր բանաստեղծ Վարդան Հակոբյանը ձեռնարկել է նաեւ գրականության ընթացքը պատկերող աշխատություն, զուտ բազմաժանրության արտահայտություն չէ. ես այդ գիրքը («Հայ նորագույն բանաստեղծության զարգացման ուղիները, 1950-1980թթ.») դիտում եմ որպես կենդանի կապ մայր հայրենիքի ու Ղարաբաղի միջեւ: Ես նրա հեղինակին համարում եմ մեծ գործիչ: Մի երկու տարի առաջ ես այնտեղ էի՝ Ղարաբաղում, եւ բազմաթիվ հանդիպումների ժամանակ զգացի, թե ինչպիսի մեծ կազմակերպչական ջիղ ունի Վարդանը, թե ժողովուրդը ինչպես է նրան սիրում: Վարդան Հակոբյանը նաեւ համալսարանի դասախոս է: Ուրեմն՝ նա իսկական հայ գրողի կերպար է, իսկական հայ բանաստեղծի կերպար: Ուրեմն՝ Վարդանը ամեն տեղ է. բացի իր գրասեղանի մոտ լինելուց՝ խրամատներում է, համալսարաններում է, զանազան գյուղական համայնքներում է: Մի խոսքով, այս ծանր տարիներին նա շատ ավելի ավելին է, քան բանաստեղծը: Այս գիրքը գրվել է դժվարին պայմաններում, երբ որ Ստեփանակերտն իր վրա կրում էր գրադի հարվածները, երբ որ Ղարաբաղը մաքառում էր թշնամու դեմ, երբ որ միաժամանակ մանուկներ էին ծնվում մոմի լույսի տակ: Ահա նույն այդ մոմի լույսի տակ, փոխաբերական իմաստով, գրված է նաեւ այս գիրքը, որը, հիրավի, արժանի է բարձր գնահատականի: Այստեղ նշվեց, որ մեր պայմաններում հատկապես, հիմա, երբ որ ընդհանուր ժխտական վերաբերմունք կա դեպի անցյալի գրականությունը, պոեզիան, անցյալի գործունեությունը, հատկապես գնահատելի է մեր հարգելի հեղինակի էսպես անաչառ մոտեցումը, խոր մոտեցումը, իմաստուն մոտեցումը դեպի մեր դժվարին, բայց բազմահարուստ անցյալը:

ՄԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

***

«Երամականչ» պոեմը իր ինքնաբուխ անմիջականությամբ, ներքին այրումներով ժողովածուի հանրագումարն է, բարձրակետը: Մայր լեռնաշխարհի հարազատ ու լավատես որդին է, «Արցախա ծուռ» Արշակ քեռին: Պոեմը վիպերգ է, ասք մարդու մասին: Պատմել նրա բովանդակությունը՝ նշանակում է գրեթե ոչինչ չասել. այն գրվել է միայն կարդալու համար: Արշակի կերպարը նորություն է սովետահայ պոեզիայում՝ նորություն էությամբ, խորքով, մեկնաբանությամբ, որքան ժամանակակից, նույնքան ավանդական, եւ դրա համար էլ՝ մնայուն եւ սերունդներին ուղեկցող հոգեսնունդ աղբյուր:

ՄԻՔԱՅԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Բանաստեղծ, ՀԳՄ նախագահ

«Ապառաժ» երկշաբաթաթերթ
Ստեփանակերտ, Կնունյանցների 17,
հեռ. +374 97 38 43, E-mail: aparajtert@gmail.com
Կայքէջ՝ www.aparaj.am

Նյութերի համար պատասխանատու են հեղինակները: Թերթը կարող է տպագրել նաեւ նյութեր, որոնցում արծարծված տեսակետները չի կիսում:
Տպագրվում է Ստեփանակերտի «ԴԻԶԱԿ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ում:
Գրանցման վկայական՝ 04: Տպաքանակը՝ 700: Գինը՝ 100 դրամ:

Խմբագիր
Ա. Պուլուզյան